2025, ԱՊՐԻԼ Ա, ԹԻՎ 7 (675)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Սուրբ Աստվածածնի Ավետման տոնի և Մայրության ու գեղեցկության օրվա առիթով

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ավետման տոնի առիթով հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք հղում համայն հավատավոր մեր ժողովրդին և ի մասնավորի՝ մեծազնիվ տիկնանց և օրիորդաց:

Ավետման ավետարանական դրվագը մեզ փոխանցում է Փրկչի աշխարհ գալու բարի ավետիսը և Սուրբ Աստվածամոր խոնարհ, հնազանդ ու հավատավոր կերպարը, որը դարձել է աստվածանվիրումի երանելի վկայություն և բարի օրինակ ծառայել հայ կանանց համար բոլոր ժամանակներում:

Հոգենորոգ այս օրը մեր եկեղեցիներում կատարվում է մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնություն՝ աղոթքով, որ ազգս զորանա նոր մանուկների ծնունդով, և մեր զավակները Աստծո օրհնության ու իրենց ծնողների հոգածության ներքո մեծանան հավատավոր հոգով, հայրենյաց սիրով և դաստիարակվեն ազգային ինքնության արժեքներով: Թող Սուրբ Աստվածածինը մեր մայրերի ու քույրերի համար շարունակի լինել ներշնչանք առ Աստված հույսի և ամենայն առաքինությունների, որոնցով բարեզարդված՝ իրենց հոգածությունն ու նվիրումը բերեն ընտանիքներում և եկեղեցական, ազգային ու հայրենական մեր կյանքում:

Հայցում ենք Սուրբ Աստվածածնի բարեխոսությունը Միածին Որդու առջև, որ Տերը Իր Սուրբ Աջի հովանու ներքո խաղաղ, անխռով ու բարօր պահի ու պահպանի հայրենի մեր երկիրն ու համայն ժողովրդին և օրհնի հայրենաշեն ու ազգաշահ բոլոր ջանքերը:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախագահն այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Ապրիլի 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելեց Հայաստան պաշտոնական այցով ժամանած Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նախագահ Շտայնմայերին և նրա մեծազնիվ տիկին Էլկե Բուդենբենդերին ողջունեց Միածնաէջ Մայր տաճարում՝ ներկայացնելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Սուրբ Էջմիածնի մեծ դերակատարությունը հայ ժողովրդի ազգային ու քրիստոնեական ինքնության կերտման գործում և նրա կարևոր ազգապահպան առաքելությունը:

Նորին Սրբությունը հաստատեց, որ պատմության ընթացքում հայ ազգն իր հավատքի զորությամբ և առ Աստված ապավինությամբ է դիմագրավել նեղություններին ու փորձություններին, Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի նմանությամբ հաղթահարել բազում գողգոթաներ՝ այդ թվում 20-րդ դարասկզբին իր նկատմամբ իրականացված ցեղասպանությունը: Հայոց Հովվապետը հույս հայտնեց, որ նույն հավատքով և ամուր կամքով հայ ժողովուրդը կհաղթահարի վերջին տարիներին հայրենիքին պատուհասած փորձությունները և ներկա ծանր մարտահրավերները:

Նկատի առնելով այն, որ Գերմանիայի նախագահը մեկնելու է նաև Ադրբեջան՝ Վեհափառ Հայրապետը խնդրանքով դիմեց պրն. Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերին՝ Բաքվում բարձրաձայնելու Արցախի ժողովրդի արդար իրավունքների, ինչպես նաև հայ ռազմագերիների ազատ արձակման, հայկական հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության հիմնախնդիրները: Նորին Սրբության խոսքի համաձայն՝ առկա հարցերի հետևողական բարձրաձայնման շնորհիվ վերջիններիս արդար հանգուցալուծմամբ միայն հնարավոր պիտի լինի տարածաշրջանում կայուն խաղաղություն հաստատել

և ժողովուրդների խաղաղ գոյակցության պայմաններ ստեղծել:

Գերմանիայի նախագահ Շտայնմայերը, շնորհակալություն հայտնելով Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Կաթողիկոսին՝ քրիստոնեական հնագույն սրբավայր այցելելու հնարավորության համար, կարևորեց կրոնների դերակատարությունը ժողովրդների կյանքում խաղաղության և համերաշխության ապահովման գործում:

➥ էջ 2

Սուրբ Աստվածածնի Ավետման տոնը Մայր Աթոռում

Ապրիլի 7-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սուրբ Մարիամ Աստվածածնի Ավետման տոնը, որը նաև մայրության և գեղեցկության տոնն է:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ այդ օրը հռչակել է որպես Մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության օր:

Տոնի առիթով Միածնաէջ Մայր տաճարում, օրհնությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց սուրբ և անմահ պատարագ: Պատարագիչն էր Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի՝ Սանկտ Պետերբուրգի Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան հոգևոր ճեմարանի տեսչի պաշտոնակատար Տ. Ղևոնդ քհն. Տյոմկինը:

Տեր հայրը, անդրադառնալով օրվա խորհրդին, ընդգծեց Տիրամոր դերակատարությունը մարդկության պատմության մեջ:

«Այսօր տոնելով Աստվածածնի ավետումը՝ մենք բոլորս մեր հայացքներն ենք ուղղում դեպի Սուրբ Կույսը և սովորում նրա օրինակով վստահել, հավատալ Աստծուն ու հնազանդվել Տիրոջ կամքին, որպեսզի արժանանանք հավիտենական անանց բարիքներին»,— ասաց տեր հայրը՝ շնորհավորելով սուրբ պատարագին ներկա մայրերին, կանանց ու օրիորդներին և հայցելով Սուրբ Աստվածածնի բարեխոսությունը նրանց համար:

Հավարտ սուրբ պատարագի, հանդիսապետությամբ Մայր Աթոռի արարողակարգային և արտաքին հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Նաթան արք. Հովհաննիսյանի, կատարվեց մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության կարգ:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախագահն այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

↩ էջ 1

Պրն. Շտայնմայերը հավաստիացրեց Հայոց Հայրապետին, որ իր միջնորդական ջանքերը կգործադրի ի նպաստ տարածաշրջանում վերջնական խաղաղության հաստատման: Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախագահը Իջման Սուրբ Սեղանի առջև աղոթք բարձրացրին առ Աստված՝ աշխարհում խաղաղության և մարդկության բարօր ու ապահով կյանքի համար: Վերջում նախագահը Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Սերովբե եպս. Իսախանյանի ուղեկցությամբ շրջեց Մայր տաճարում, ծանոթացավ հիմնանորոգված սրբավայրի պատմությանը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արձագանքը Ադրբեջանի կողմից Հռոմում կազմակերպված հակահայկական ուղղվածություն ունեցող միջոցառմանը

Այսյ թվականի ապրիլի 10-ին Հռոմի պապական Գրեգորյան համալսարանում Սուրբ Աթոռում Ադրբեջանի դեսպանության և ադրբեջանական որոշ կազմակերպությունների նախաձեռնությամբ տեղի է ունեցել «Քրիստոնեությունը Ադրբեջանում. պատմություն և արդի ժամանակներ» վերտառությամբ միջոցառում՝ տարբեր երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Միջոցառման ընթացքում ադրբեջանական քարոզչամեքենայի նախաձեռնությամբ հերթական անգամ փորձ է արվել ժխտելու Հայաստանի և Արցախի պատմամշակութային ժառանգության հայկական պատկանելությունը, խեղաթյուրելու պատմական իրողությունները՝ այն հետագայում յուրացնելու չարամիտ նպատակով:

Այս ամենը տեղի է ունենում, երբ տակավին միջազգային հանրության կողմից պատշաճ գնահատականներ չեն տրվել Ադրբեջանի իրականացրած ցեղասպան գործողություններին, Արցախից բռնի տեղահանված ողջ հայության հիմնարար իրավունքների ոտնահարմանը, Բաքվի բանտերում պահվող հայ ռազմագերիների նկատմամբ իրականացվող անօրինական ու նվաստացուցիչ գործողություններին, Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության յուրացման և հայկական հետքերի իսպառ ոչնչացման դեպքերին:

Ցավում ենք, որ կաթոլիկ բարձրագույն կրթական հաստատության հարկից ներս թույլատրվել է կազմակերպել նման հակագիտական միջոցառում:

Այս առնչությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը միջեկեղեցական հաղորդակցության ընկալյալ շրջանակներում նախաձեռնելու է անհրաժեշտ քայլեր:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժին

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Ապրիլի 1-ին **Հունգարիայի եկեղեցիների էկումենիկ խորհրդի պատվիրակությանը**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունգարիայի Եկեղեցիների խորհրդի գլխավոր քարտուղար, Լյութերական-Ավետարանական Եկեղեցու վերապատվելի Վիլմոշ Ֆիշլի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերին՝ Վեհափառ Հայրապետը վերջիններիս այցը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին նկատեց որպես զորակցություն հայ ժողովրդին այս դժվարին ժամանակներում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքն արտահայտեց Հունգարիայի կողմից նախաձեռնված՝ արցախահայերի աջակցությանն ուղղված ծրագրերի առնչությամբ:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետը, անդրադառնալով Բաքվում պատանդառված հայորդիների ազատ արձակման խնդրին, գոհունակությամբ հաստատեց, որ շնորհիվ Հունգարիայի կառավարության և Մայր Աթոռի գործակցության՝ 2021 թվականին հնարավոր եղավ ապահովել հինգ հայ ռազմագերիների վերադարձը հայրենիք:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաև հայ-հունգարական փոխգործակցությանը, Հայոց Եկեղեցու միջեկեղեցական հարաբերություններին, ինչպես նաև Հունգարիայի հայ համայնքի ազգային-հոգևոր կյանքին: Զրույցի ընթացքում վերապատվելի Վիլմոշ Ֆիշլը խոսեց հայ-հունգարական պատմական առնչակցությունների մասին, կարևորեց ընդհանուր քրիստոնեական արժեհամակարգ ունեցող երկու ժողովուրդների հարաբերությունների առավել զորացումն ու ամրապնդումը:

Ապրիլի 3-ին **«Դանիական-հայկական բարեգործական առաքելություն» ՀԿ-ի անդամներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Դանիական-հայկական բարեգործական առաքելություն» հասարակական կազմակերպության ատենապետ հայր Մայքլ Թոմսենին և կազմակերպության հոգաբարձուների խորհրդի անդամներին՝ ուղեկցությամբ գործադիր տնօրեն Արշավիր Գաբուճյանի:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը բերեց կազմակերպության պատասխանատուներին՝ Հայաստանում տասնամյակներ շարունակ Հայ Եկեղեցու թեմերի հետ գործակցությամբ իրականացվող կրթական և սոցիալական ծրագրերի համար:

Հայր Մայքլ Թոմսենը, իր երախտագիտությունը հայտնելով Նորին Սրբությանը մշտական քաջալերանքի և օրհնության համար, ներկայացրեց կազմակերպության գործունեության ընթացքում արձանագրված հաջողությունները, ինչպես նաև առկա մարտահրավերները:

Ապրիլի 8-ին **Վերապատրաստման դասընթացներին մասնակից եկեղեցականներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի և Սփյուռքի տարբեր թեմերից ժամանած՝ վերապատրաստման դասընթացներին մասնակից եկեղեցականներին:

Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը փոխանցեց հոգևոր հայրերին և բարձր գնահատեց եկեղեցականների ծիսական, աստվածաբանական գիտելիքները հարստացնելու նախանձախնդրությունը՝ ընդգծելով շարունակական կրթության կարևորությունն իրենց ծառայության առավել արդյունավետ իրականացման գործում:

Հայոց Հայրապետը աշխարհասփյուռ թեմերից հոգևորականների մեկտեղումը պատեհ առիթ նկատեց նաև հոգով զորանալու և իրենց ուխտը վերանորոգելու Մայր Աթոռի աղոթական մթնոլորտում, ինչպես և արծարծելու հովվական ծառայությանն առնչվող տարբեր խնդիրներ ու մարտահրավերներ:

Վերջում Նորին Սրբությունը հորդորեց քահանա հայրերին իրենց ողջ կարողություններն ու գիտելիքներն ի սպաս դնել եկեղեցու պայծառության, հայ ժողովրդի բարօրության և հայրենիքի շենացման համար:

Ծաղկազարդի տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Ապրիլի 13-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Երուսաղեմ հաղթական մուտքի հիշատակը՝ Ծաղկազարդը: Տոնը տարիներ առաջ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հռչակվել էր Մանուկների օրհնության օր:

Այս առիթով առավոտյան ժամերգությունից հետո, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Միածնաէջ Սուրբ տաճարի շրջափակում տեղի ունեցավ Անդաստանի արարողություն և մանուկների օրհնության կարգ:

Նորին Սրբությունն իր օրհնությունը բաշխեց Մայր Աթոռում համախմբված բազում մանուկների՝ նրանց ընծայելով խաչեր, իսկ հավատավոր ժողովրդին բաշխվեցին Անդաստանի ընթացքում օրհնված ուռենու ճյուղերը:

Հոգենորոգ տոնի կապակցությամբ Մայր տաճարում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց սուրբ և անմահ պատարագ: Պատարագիչն էր Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Վարդան եպս. Նավասարդյանը:

Վարդան սրբազանը, իր քարոզում անդրադառնալով օրվա խորհրդին, ընդգծեց, որ Ծաղկազարդով ավարտվում է Մեծ պահքը, և սկսվում են Ավագ շաբաթվա տնօրինական խորհուրդները:

Անդրադառնալով Հիսուս Քրիստոսի Երուսաղեմ հրաշափառ մուտքի ժամանակ հրեաների և ներկա բոլոր ուխտավորների սպասումներին՝ պատարագիչ սրբազանը նշեց. «Քրիստոս մեզ սովորեցրեց, որ մենք ոչ միայն ուրախության, երջանկության, հաջողության ժամանակ օրհնենք Աստծուն, այլև մեր կյանքում պատահած դժվարության և փորձության պահերին:

Հիսուս մեզ ուսուցանեց, որ Տերը ցանկանում է մտնել մեր կյանք և թակում է յուրաքանչյուրիս սրտի դուռը, իսկ մեզ մնում է բացել այդ դուռը՝ Քրիստոսին ընդունելով իբրև մեր կյանքի վերափոխման աղբյուրի, որպես մեր կյանքում երջանկության, համերաշխության և խաղաղության կերտողի»:

Վերջում Վարդան սրբազանը, դիմելով ներկաներին, հորդորեց Քրիստոսով նորոգվել ու ծաղկազարդվել՝ պատրաստ լինելով Տիրոջ փառահեղ գալստյանը:

Սուրբ պատարագի ավարտին, Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ, վերստին կատարվեց մանուկների օրհնության կարգ:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ծաղկազարդ

Հայ Եկեղեցին Սուրբ Հարության տոնից մեկ շաբաթ առաջ՝ կիրակի օրը, նշում է Ծաղկազարդը: Քրիստոնեական այս տոնը նվիրված է Հիսուս Քրիստոսի՝ խաչելությունից վեց օր առաջ Երուսաղեմ այցելությանը: Ծաղկազարդի տոնը յուրահատուկ խորհուրդ ունի, որովհետև ներկայացնում է Հիսուս Քրիստոսի թագավորական ընդունելությունը ժողովրդի կողմից: Հայտնի է, որ հրեաներն սպասում էին իրենց Մեսիային, որ պետք է գար և ազատեր իրենց՝ ստեղծելով մեծ հրեական թագավորություն: Եվ երբ Հիսուս Քրիստոս մուտք է գործում Երուսաղեմ, ժողովուրդն իր ընկալումներով ընդունում էր Մեսիային, որ գալիս էր իրենց ազատելու օտար տիրակալներից:

Այն հանգամանքը, որ քաղաք մտնողն իրական Մեսիան էր, հուշում է նաև Զաքարիայի հայտնի մարգարեությունը. «Ահա քո թագավորը գալիս է քեզ մոտ, արդարը և փրկիչը. նա հեզ է՝ հեծած էշի վրա և նրա ավանակի վրա» (Զաք. 9:9):

Չնայած հրեաները Հիսուսից սխալ սպասումներ ունեին, այնուամենայնիվ նրանք ճիշտ էին, և քաղաք էր մտնում իրական Մեսիան, ինչպես և մարգարեությունում խոստացվել էր. «Գնացեք այդ գյուղը, որ ձեր դիմացն է, և այնտեղ անմիջապես կգտնեք կապված մի էշ, քուռակն էլ հետը. արձակեք բերեք ինձ.... Բերեցին էշն ու քուռակը, նրանց վրա գցեցին իրենց հագուստները: Ապա Հիսուս նստեց դրանց վրա» (Մատթ. 21:2–7): Քանի որ իրականանում էր մարգարեությունը, և հրեաների կարծիքով՝ բաղձալի պահը մոտ էր, բոլորն իրենց հագուստներն ու ծառից պոկած ճյուղերը փռում էին ճանապարհի վրա՝ աղաղակելով. «Օրհնություն Դավթի Որդուն, օրհնյալ է Նա, որ գալիս է Տիրոջ անունով, օրհնություն Բարձրյալին» (Մատթ. 21:8–9):

Իրականում Հիսուսի մուտքն ավանակով գեղեցիկ խորհրդաբանություն ունի: Ավանակը գրեթե բոլոր ժողովուրդների կյանքում խոնարհության և խաղաղության խորհրդանիշն է: Սա ակնհայտ արարք էր նախ՝ որպես մարգարեության իրականացում, և երկրորդ՝ իբրև ապացույց, որ քաղաք մտնող Հիսուս Քրիստոս խաղաղության, ոչ թե ժողովրդի ընկալած աշխարհիկ թագավորն է: Մարդիկ, անկախ իրենց գիտակցումից, դիմավորում էին հաղթանակած մեկին: Դրա համար էին Նրա ոտքերի տակ իրենց հագուստներն ու արմավենու ճյուղերը փռում:

Մտնելով Երուսաղեմ՝ Հիսուս առաջին հերթին գնաց տաճար և այնտեղից վտարեց բոլոր վաճառողներին: Սա տաճարի մաքրագործման յուրահատուկ արարողություն էր, ինչն ունի կարևորագույն նշանակություն: Հայտնի է, որ արդեն երկար տարիներ տաճարում կենդանիներ էին վաճառվում, և դրամափոխները, հեռու երկրներից եկած, հրեաների դրամներն էին փոխում տեղական դրամով: Իսկ սա Հիսուսի երեսուներեքերորդ այցելությունն էր Երուսաղեմ՝ տաճար, քանի որ օրենքների համաձայն՝ յուրաքանչյուր տարի առնվազն մեկ անգամ բոլոր հրեաները գալիս էին Երուսաղեմ՝ Սուրբ Զատկի տոնին մասնակցելու: Բայց սա առաջին անգամն էր, որ Հիսուս տաճարից դուրս է հանում դրամափոխներին և կենդանավաճառներին:

Իրականում այս դեպքը պարզ իրադարձություն չէ: Աստվածաշունչը պատմում է, որ Մովսեսին օրենքները տրվելուց հետո Տիրոջ ներկայությունն ամպի տեսքով վրանում (նախքան տաճարի կառուցումը պատրաստվեց Վկայության խորանը՝ վրանի մեջ) լցվեց (Ելք 40:32): Երբ Սողոմոնը կառուցեց տաճարը, ու այն օծվեց, Տիրոջ փառքը լցվեց տաճարում (Գ Թագ. 8:10–11): Սակայն երբ հրեաները հեռանում են Աստծուց, Տիրոջ ներկայությունն էլ լքում է տաճարը. «Տիրոջ փառքը տաճարի նախագավթից դուրս ելավ» (Եզեկ. 10:18):

Ժան Լեոն Ժերոմ, Հաղթական մուտք Երուսաղեմ, 1897 թ.

Քրիստոսի ժամանակ տաճարը վերակառուցվել էր, և Հիսուսի մեսիական մուտքն ու տաճարում իշխանության դրսևորումը բոլորին ցույց էր տալիս Նրա աստվածային փառքը, որ այդ պահին տաճարում էր, իսկ հետո իջնելու էր առաքյալների վրա (Գործք 2:2): Սրանից զատ՝ Նա նաև բժշկեց իրեն մոտեցած կույրերին ու կաղերին:

Ծաղկազարդի օրը, ընդունված ավանդույթի համաձայն, եկեղեցիները զարդարվում են ուռենու ճյուղերով, որոնք բաժանվում են հավատացյալներին: Այդ օրը՝ առավոտյան՝ ժամերգությունների ժամանակ, եկեղեցիներում կատարվում է Անդաստանի արարողություն, որի ժամանակ օրհնվում են աշխարհի չորս կողմերը՝ ազդարարելով պտղատու տարվա սկիզբը:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդի հայրապետական տնօրինությամբ Ծաղկազարդի օրը հռչակվել է որպես Մանուկների օրհնության օր, քանի որ երբ Քրիստոս Երուսաղեմ էր մտնում, մանուկներն օրհնեցին Տիրոջ գալուստը. «Երբ քահանայապետներն ու դպիրները տեսան Հիսուսի կատարած հրաշքները և մանուկներին, որ տաճարում աղաղակում էին և ասում. «Օրհնություն Դավթի Որդուն», բարկացան» (Մատթ. 21:15): Այդ օրը եկեղեցիներում, հատկապես Անդաստանի ժամանակ, կարող ենք տեսնել բազմաթիվ մանուկների, որոնք իրենց ընտանիքների հետ եկել են՝ օրհնություն ստանալու:

Ծաղկազարդից հետո՝ Ավագ երկուշաբթիից սկսած, յուրաքանչյուր օր ունի իր խորհուրդն ու նշանակությունը, որոնք առաջնորդում են դեպի մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության տոնը:

Լիանա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Մայիս սրկ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Սուրբ Մարիամ Աստվածամոր կյանքը.
ծնունդից մինչև վերափոխում

Աստվածամոր կյանքի մասին տեղեկություններ պահպանվել են Ավետարաններում, սակայն այնտեղ արձանագրված են միայն այն դրվագները, որոնք առնչություն ունեն Քրիստոսի կյանքի և փրկչական տնօրինության հետ: Ավետարաններում հանգամանալից ներկայացված են Հիսուսի ծննդյան և դրան նախորդող դեպքերը, և այդ բոլորը մաս առ մաս հավաքագրելով՝ հստակ տեղեկություններ ենք կարողանում վեր հանել Մարիամ Աստվածածնի կյանքի վերաբերյալ: Իսկ Աստվածամոր ծնողների՝ Հովակիմի ու Աննայի, նրա ծննդյան, ապա Տաճարին ընծայման մասին տեղեկություններ մեզ փոխանցում է ավանդությունը:

Տիրամոր ծնողները՝ Հովակիմն ու Աննան, աստվածավախ մարդիկ էին, ապրում էին Նազարեթ քաղաքում: Հովակիմը Հուդայի թագավորական ցեղից էր, իսկ Աննան՝ Ղևիի քահանայական տոհմից: Նրանք առաջացած տարիքում էին և զավակ չունեին, քանի որ Աննան անծնունդ էր, ու դա նախատինք էր Իսրայելում: Հովակիմն ու Աննան անդադար աղոթում էին, որ Աստված իրենց զավակ պարգևի, անգամ ուխտել էին, որ եթե զավակ ունենան, կընծայեն Տիրոջը՝ Տաճարում ծառայելու: Աստված լսում է նրանց աղոթքները, և Աննան հղիանում ու լույս աշխարհ է բերում Մարիամին:

Բարտոլոմե Էստեբան Մուրիլյո, Անարատ հղություն, 1660—1665 թթ.

Երբ Մարիամը երեք տարեկան է դառնում, ծնողները նրան Տաճար են տանում, որ իրագործեն Աստծո հանդեպ իրենց ուխտը: Սուրբ Կույսը տասնմեկ տարի ապրում է Տաճարում՝ ծառայելով Աստծուն:

Մատթեոսի և Ղուկասի Ավետարանները տեղեկություններ են հաղորդում Աստվածամոր ավետման և Փրկչի ծննդյան վերաբերյալ:

Մարիամը նշանվել էր Հովսեփ անունով մի մարդու հետ, և նրանք ապրում էին Գալիլեայի Նազարեթ քաղաքում (Ղուկ. 1:27): Մատթեոսի Ավետարանում զետեղված «Հիսուսի այցը Նազարեթ» հատվածից պարզ է դառնում, որ Հովսեփը մասնագիտությամբ հյուսն էր. «Սա հյուսնի որդին չէ. սրա մայրը չէ, որ Մարիամ է կոչվում» (Մատթ. 13:55):

Մինչ նշանված էին Մարիամն ու Հովսեփը, «վեցերորդ ամսին Գաբրիել հրեշտակը Աստծու կողմից ուղարկվեց Գալիլիայի մի քաղաք, որի անունը Նազարեթ էր, մի կույսի մոտ.... և այդ կույսի անունը Մարիամ էր...., և հրեշտակը նրան ասաց. «Մի վախեցիր, Մարիամ, որովհետև Աստծուց շնորհ գտար: Եվ ահա դու կհղիանաս և կծնես մի որդի ու Նրա անունը Հիսուս կդնես»» (Ղուկ. 1:26–31):

Հովսեփն իմանալով, որ իր նշանածը հղի է, որոշում է արձակել Մարիամին՝ առանց խայտառակելու և աղմուկի: Սակայն «մինչև նա այս բանի մասին էր մտածում, ահա Տիրոջ հրեշտակը երազի մեջ երևաց նրան և ասաց. «Հովսեփ՝ Դավթի որդի, մի՛ վախեցիր քեզ մոտ առնելու Մարիամին՝ քո կնոջը, որովհետև նրա մեջ ծնվածը Սուրբ Հոգուց է»» (Մատթ. 1:20): Միևնույն ժամանակ հրեշտակը պատվիրում է մանկան անունը Հիսուս դնել, և Հովսեփը, քնից արթնանալով, վարվում է այնպես, ինչպես հրամայել էր Տիրոջ հրեշտակը (Մատթ. 1:24):

Գաբրիել հրեշտակի ավետումից հետո Մարիամը գնում է Հուդայի լեռնային շրջանի քաղաքներից մեկը՝ Հովհաննես Մկրտչի ծնողներին՝ Զաքարիա քահանային և Եղիսաբեթին այցելելու: Այդ ժամանակ Եղիսաբեթը ևս հղի էր. «Եվ երբ Եղիսաբեթը Մարիամի ողջույնը լսեց, մանուկը խաղաց նրա որովայնում, և Եղիսաբեթը լցվեց Սուրբ Հոգով և բարձր ձայնով աղաղակեց և ասաց. «Օրհնյալ ես դու կանանց մեջ, և օրհնյալ է քո որովայնի պտուղը: Որտեղից ինձ այս ուրախությունը, որ իմ Տիրոջ մայրը ինձ մոտ գա»»: (Ղուկ. 1:39–43): Մարիամը գրեթե երեք ամիս մնում է Եղիսաբեթի մոտ, ապա վերադառնում է Նազարեթ (Ղուկ. 1:56):

Փրկչի ծննդյան նախընթաց օրերին Օգոստոս կայսեր կողմից հրաման է արձակվում՝ ամբողջ երկրում մարդահամար անելու: Եվ բոլորը գնում էին գրանցվելու՝ յուրաքանչյուրն իր քաղաքում: Հովսեփն էլ, Դավթի տնից և ազգատոհմից լինելով, Մարիամի հետ Գալիլեայի Նազարեթ քաղաքից գնում է Դավթի քաղաք, և երբ նրանք հասնում են Բեթղեհեմ, Մարիամի ծննդաբերության օրերը լրանում են. «Եվ նա ծնեց իր անդրանիկ որդուն, խանձարուրի մեջ փաթաթեց նրան ու դրեց մսուրի մեջ, որովհետև իջևանում նրանց համար տեղ չկար» (Ղուկ. 2:1–7):

Երբ մանուկ Հիսուսի ծննդյան ութ օրը լրանում է, Նրան թլփատում և Հիսուս են անվանակոչում, ինչպես հրեշտակի կողմից ասվել էր ավետման ժամանակ (Ղուկ. 2:21): Մովսեսի Օրենքի համաձայն՝ սրբագործման օրերը լրանալուց հետո ծնողները մանկանը տանում են Երուսաղեմ՝ Տիրոջը ներկայացնելու համար: Այդ ժամանակ Երուսաղեմում Սիմեոն անունով արդար և աստվածավախ մի մարդ էր ապրում, որին Սուրբ Հոգու կողմից հրամայված էր չմահանալ, մինչև չտեսներ Տիրոջ Օծյալին՝ Հիսուս Քրիստոսին: Սիմեոն ծերունին Սուրբ Հոգու առաջնորդությամբ գալիս է Տաճար, և երբ Հովսեփն ու Մարիամը բերում են մանուկ Հիսուսին, Նրան իր գիրկն է առնում և օրհնում: Այդ տեսնելով՝ Մարիամն ու Հովսեփը զարմանում են, ապա Սիմեոնը նրանց էլ է օրհնում՝ Մարիամին ասելով. «Քո հոգու միջոցով էլ սուր պիտի անցնի, որպեսզի բազում սրտերի խորհուրդներ հայտնի դառնան» (Ղուկ. 2:25–35): Սիմեոն ծերունին այս խոսքերով մարգարեանում է՝ մատնանշելով Աստվածամոր տառապանքները, քանի որ Տիրամայրն ականատեսը պիտի դառնար իր Միածին Որդու չարչարանքներին ու խաչելությանը:

Բարտոլոմե Էստեբան Մուրիլյո, Սուրբ ընտանիքի վերադարձը Եգիպտոսից, տարեթիվն անհայտ է

Փրկչի ծնունդից հետո Հերովդես արքան, մանուկ Հիսուսին այցելած մոգերից խաբվելով, սաստիկ բարկանում և մարդկանց է ուղարկում՝ կոտորելու երկու տարեկան և դրանից փոքր բոլոր մանուկներին, որ Բեթղեհեմում և նրա սահմաններում էին գտնվում: Նախքան Բեթղեհեմի մանուկների կոտորածը Տիրոջ հրեշտակը երազի մեջ հայտնվում է Հովսեփին՝ ասելով. «Վեր կաց, վերցրու այդ մանկանը և Նրա մորը ու փախիր Եգիպտոս և այնտեղ մնա, մինչև որ քեզ ասեմ. քանի որ Հերովդեսը փնտրում է այդ մանկանը կորստյան մատնելու համար» (Մատթ. 2:13):

Երբ Հերովդես արքան վախճանվում է, Տիրոջ հրեշտակը կրկին հայտնվում է Հովսեփին Եգիպտոսում՝ պատվիրելով մանկան ու մոր հետ վերադառնալ Իսրայել, քանի որ մեռել են նրանք, որ մանկան մահն էին ուզում (Մատթ. 2:19): Հովսեփը, լսելով Տիրոջ հրեշտակին, գալիս է Իսրայելի երկիր, սակայն տեղեկանալով, որ Հրեաստանում Հերովդեսին հաջորդել է նրա որդի Արքեղայոսը, վախենում է այնտեղ գնալ և երազի մեջ հրաման առնելով՝ գնում է Գալիլեայի կողմերը, բնակվում Նազարեթ քաղաքում (Մատթ. 20:23):

Ավետարաններում խիստ սակավ տեղեկություններ կան Հիսուսի մանկության և պատանեկության տարիներին կատարված դեպքերի վերաբերյալ, և մենք ներկայացնում ենք միայն այն իրադարձությունները, որտեղ կցկտուր փաստեր կան նաև Աստվածամոր մասին:

Տասներկու տարեկանում Հիսուսի և նրա ծնողների՝ Զատկի տոնին Երուսաղեմ գնալու մասին Ղուկաս ավետարանիչը գրում է. «Նրա ծնողները ամեն տարի, Զատկի տոնին, Երուսաղեմ էին գնում: Եվ երբ Նա տասներկու տարեկան եղավ, տոնի սովորության համաձայն՝ Երուսաղեմ ելան: Եվ երբ տոնական օրերը լրացան, ու նրանք վերադարձան, մանուկ Հիսուսը մնաց Երուսաղեմում, և Նրա ծնողները այդ չիմացան» (Մատթ. 2:41–43): Հովսեփն ու Մարիամը կարծում էին, թե Հիսուսն իրենց ուղեկիցների հետ է, մի օրվա ճանապարհ գնալով՝ Նրան փնտրում են ազգականների ու ծանոթների մեջ և, չգտնելով Նրան, սարսափած ու խիստ անհանգստացած՝ վերադառնում են Երուսաղեմ՝ Հիսուսին այնտեղ փնտրելու: Երեք օր հետո նրանք Հիսուսին գտնում են Տաճարում՝ վարդապետների հետ նստած: Տեսնելով Նրան՝ ծնողները սքանչանում են, իսկ մայրն ասում է. «Որդի՛, այս ի՞նչ արեցիր դու մեզ. ահավասիկ հայրդ ու ես տագնապած քեզ էինք փնտրում» (Ղուկ. 2:48):

Մարիամ Աստվածածնի մասին հաջորդ տեղեկությունները կապված են արդեն Հիսուսի քարոզչության տարիների հետ: Առաջին հրաշքը Տեր Հիսուս կատարեց Գալիլեայի Կանա քաղաքում՝ հենց Իր մոր բարեխոսությամբ, ջուրը գինու փոխելով: Այդ հարսանիքին հրավիրված էին Աստվածամայրը, Հիսուս և Նրա աշակերտները: Երբ հարսանիքի ժամանակ պակասում է գինին, Աստվածամայրը խնդրանքով դիմում է իր Որդուն, և Հիսուս պատասխանում է. «Ի՞նչ ես ուզում ինձնից, ով կին, իմ ժամանակը դեռ չի հասել» (Հովհ. 2:4):

Վարդգես Սուրենյանց, Ավետում, 1900 թ.

Առաջին հայացքից այս խոսքերը անհարազատ են մեզ թվում, սակայն երբ քննում ենք Տիրոջ քարոզչության անցած ճանապարհը, հասկանում ենք, որ սա, ընդհակառակը, պարզ խթան է Տիրամոր հավատը արծարծելու համար, և այդ հավատքի շնորհիվ է, որ Քրիստոս հարսանիքի ժամանակ կատարում է իր առաջին հրաշքը:

Աստվածամայրն իր Որդու քարոզչության ժամանակ հաճախ էր հետևում Նրան: Ավետարանական համապատասխան դրվագներից մեկում, երբ մի օր Հիսուս, մեծ բազմություն շուրջը հավաքած, քարոզում էր, «Նրա մոտ եկան Իր մայրն ու եղբայրները և չէին կարողանում Նրան մոտենալ բազմության պատճառով» (Ղուկ. 8:19):

Ցավալիորեն, Աստվածամայրն ականատես է լինում նաև իր Որդու չարչարանքներին ու խաչելությանը: Հիսուս խաչի վրա Իր երկրային կյանքի վերջին րոպեներին դառնակսկիծ սրտով տեսնում է Իր մորը, որ խաչի մոտ կանգնած էր՝ Իր սիրելի աշակերտ Հովհաննեսի հետ, և դառնալով մորը՝ ասում է. «Ով կին, ահա քո որդին»: «Ապա աշակերտին ասաց. «Ահա քո մայրը»: Եվ այդ պահից աշակերտը նրան իր մոտ առավ» (Հովհ. 19:26–27): Այս դրվագից կարող ենք վստահաբար փաստել, որ Հիսուս Իր քարոզչության ընթացքում, հակառակ բազմազբաղության և տեղափոխություններին մի վայրից մյուս վայր, Իր խնամքի և հոգածության ներքո էր պահում Աստվածամորը: Այս վկայությամբ ավարտվում են Ավետարաններում Աստվածամորը վերաբերող հիշատակությունները:

Ավանդության համաձայն՝ Փրկչի խաչելությունից հետո Աստվածածինն ապրում էր Երուսաղեմում՝ բոլոր առաքյալների հոգածության և ուշադրության կենտրոնում, առավելապես՝ Հովհաննեսի:

Աստվածամայրը ննջում է հանգիստ ու խաղաղ: Քրիստոսի բոլոր առաքյալները հանդիսավոր թափորով թաղում են նրան Գեթսեմանիի ձորակում: Թաղման ժամանակ միայն ներկա չէր Բարդուղիմեոս առաքյալը: Իմանալով այդ մասին՝ նա շտապում է Երուսաղեմ՝ ցանկանալով անպայման վերջին անգամ տեսնել Աստվածամորը: Մյուս առաքյալների ընկերակցությամբ Բարդուղիմեոսը գնում է թաղման վայրը, և բացելով գերեզմանը՝ տեսնում են, որ այնտեղ չէ Աստվածածնի մարմինը. Տերը նրան վերափոխել և բարձրացրել էր երկինք:

Մարիամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արամայիս սրկ. ԱԶԻԶՅԱՆ

ԴԱՍԸ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՅ: ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայ հոգևորականության բռնադատումներն ու եկեղեցիների կործանումը խորհրդային վարչակարգի օրոք

1920—1950 թթ. խորհրդային բռնապետության կողմից Եկեղեցու դեմ իրականացվեց բռնակալական քաղաքականություն, որի հետևանքով ամայացավ հայ հոգևոր կյանքը: Այդ տարիներին բռնադատված հոգևորականների՝ ՆԳՆ-ի և ԱԱԾ-ի արխիվներում պահպանված դատական գործերն անցնում են 1000-ից, բայց մինչև այժմ չի պարզվել բանտարկված, գնդակահարված, աքսորված կամ արտաքսված հոգևորականների վերջնական թիվը: Հայաստանում համատարած քանդվում կամ պահեստների, ախոռների ու ակումբների էին վերածվում եկեղեցիները:

Հայ Առաքելական Եկեղեցու դեմ բոլշևիկյան իշխանության բռնի քաղաքականությունն սկսվեց 1920 թ. դեկտեմբերին՝ դրսևորվելով նախ գույքի բռնագանձմամբ և իրավունքների ու գործառույթների խիստ սահմանափակմամբ: Դպրոցն անջատվեց Եկեղեցուց, բռնագրավվեցին Գևորգյան ճեմարանը, մատենադարանը, Ս. Էջմիածնի, Ս. Գայանեի, Ս. Հռիփսիմեի, Ս. Զվարթնոցի շենքերը, էջմիածնապատկան այգիները, պահանջեցին հանձնել նաև դարերով պահպանված արժեքները՝ գեղարվեստական, տնայնագործական, ոսկեղեն, արծաթեղեն, քարեղեն և այլն: Մայր Աթոռը Կաթողիկոս Գևորգ Սուրենյանցի գլխավորությամբ սկսեց համառ դիմադրություն՝ բոլշևիկյան բախտախնդիրներից փրկելու հնարավորը՝ քաջ գիտակցելով, որ եկեղեցական արժեքների «պետականացումը» նշանակում է անհայտության դատապարտել ազգային դարավոր ժառանգությունը:

Եկեղեցական հարստության թալանումը կատարվում էր ամբողջ Խորհրդային Միությունում՝ Լենինի հատուկ հրահանգով՝ առգրավել եկեղեցական արժեքները «ամենավճռական և ամենաարագ ձևով, որով էլ մենք կկարողանանք ապահովել մեզ հիմնադրամ՝ մի քանի հարյուր միլիոն ոսկե դրամով»: Բոլշևիկյան բռնապետն իր նույն հրահանգում խիստ անհրաժեշտ էր համարում օգտվել սովի իրավիճակից՝ ժողովրդական զանգվածների համակրանքը շահելու համար, և «անողոք ու վճռական մենամարտի» ելնել հոգևորականության դեմ. «Ճնշենք նրա դիմադրությունը այնպիսի դաժանությամբ, որպեսզի նա մի քանի տասնամյակների ընթացքում չմոռանա այդ.... Որքան շատ մեզ հաջողվի գնդակահարել հետադիմական բուրժազիայի և հետադիմական հոգևորականության ներկայացուցիչների, այնքան լավ» («Собеседник», 1990 г., № 16):

Հոգևորականության դեմ ծավալվեց գռեհիկ պայքար, որն ուղեկցվում էր ձերբակալություններով, աքսորով, գնդակահարությամբ, ունեզրկմամբ և այլն: Ժամանակի մամուլը հեղեղված էր հակաեկեղեցական զրպարտություններով, հոգևորականությունը մեղադրվում էր ծանրագույն պատիժ ենթադրող հոդվածներով՝ «հակահեղափոխականություն», «ազգայնամոլություն», «դաշնակցականություն», «ժողովրդի թշնամի» և այլն: Գևորգ Ե Կաթողիկոսը նամակ-դիմումներով հորդորում էր կառավարությանը՝ բանտից ազատել և վանքում վերահսկողության տակ առնել հոգևորականներին, բայց ապարդյուն:

1921 թ. փետրվարին բոլշևիկների ապազգային կառավարության դեմ դաշնակցականների ապստամբությունը, որին աջակցում էին նաև հոգևորականության ներկայացուցիչներ, պսակվեց կարճ հաղթանակով. կառավարությունն անցավ դաշնակցականներին, բանտերից ազատվեցին կալանավորները, մյուս կողմից էլ՝ Սյունյաց հոգևոր թեմի նախկին առաջնորդ, Թավրիզում գտնվող Ատրպատականի հայոց թեմական առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը վիթխարի օգնություն՝ զինամթերք, պարենեղեն էր հասցնում Լեռնահայաստանի սպարապետ Գարեգին Նժդեհին՝ նպաստելով նրա ղեկավարությամբ Հայաստանի ազատագրմանը և Սյունիքի պահպանմանը Հայաստանի կազմում: Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Սուրենյանցն օրհնեց դաշնակցականների հաղթանակը, և երբ բոլշևիկների մեծաքանակ ուժերի ճնշմամբ իշխանությունը հարկադրված զիջվեց նրանց, չվախենալով հատուցումից, Վեհափառը հոգեհանգիստներ էր կատարում բոլշևիկների դեմ պայքարում զոհված հերոսների պատվին:

Դաշնակցականների պարտությունից հետո Հայ Առաքելական Եկեղեցին մնաց միայնակ, բայց դրանից չպակասեց նրա վճռականությունը:

Եկեղեցու ազդեցությունից զգուշանալով՝ բոլշևիկները քայլ առ քայլ էին նրան զրկում արտոնություններից, փորձում ժողովրդի մեջ վարկաբեկել նրան, թուլացնել ներգործությունը հավատացյալների վրա: Ի հեճուկս դրա շարունակելով վայելել ժողովրդական վստահություն՝ Եկեղեցին համառորեն բանակցում և պահանջում էր իշխանությունից՝ վերականգնել իր օրինական իրավունքներն ու ազատությունները:

Օրըստօրե հոգևորականության վիճակն ավելի էր ծանրանում: Եկեղեցականները կանգնած էին երկընտրանքի առջև՝ կամ հրաժարվել Եկեղեցուց և իրենց սկզբունքներից, կամ բանտարկվել ու սպասել դատավճռի: Այդ տարիներին եղան նաև քահանաներ, որոնք փրկվելու համար հրաժարվեցին սքեմներից, թեև քիչ, գտնվեցին և այնպիսիները, որ բանտում չեկիստների բռնաճնշումների ներքո մեղադրական վկայություններ տվեցին հոգևորականության դեմ, ինչպես, օրինակ, ծայրագույն վարդապետ Վահրամ Մարտիկյանը: Սակայն, ի պատիվ Եկեղեցու, եղան նաև այնպիսի հոգևորականներ, որոնք մինչխորհրդային ժամանակներում, հրաժարվելով հոգևոր կոչումից, աշխարհական էին դարձել և բռնաճնշումների վտանգավոր տարիներին վերադարձան իրենց կոչմանը՝ քարոզչություն անելու և Եկեղեցուն սատար կանգնելու, ինչպես Ղարսի նախկին հոգևոր առաջնորդ, Գևորգյան ճեմարանի դասախոս Ռափայել Մելիք-Ադամյանը, որը հայտնի է Մամբրե վարդապետ անունով:

1927 թ. հոկտեմբերին սպանվում է Թադեոս քահանա Տեր-Հարությունյանը, դեկտեմբերին խեղդամահ է արվում Խորվիրապի վանահայր Կարապետ վարդապետ Աստվածատրյանը, կողոպտվում՝ վանքը: Նույն թվականին

Խորեն Ա Կաթողիկոս

բանտարկվում և հինգ տարվա ազատազրկման է դատապարտվում Էջմիածնի վանքի միաբան, Եվրոպայում կրթված, Խարկովի և Բաթումի հոգևոր առաջնորդ, ծերունազարդ եպիսկոպոս Սրապիոն Սամվելյանը՝ արտասահմանյան երկրների օգտին լրտեսելու, ցարական կառավարության ոստիկանության հետ համագործակցելու և հեղափոխականներին մատնելու, հայրենիքի դավաճան լինելու մեղադրանքով:

1927 թ. բանտարկվում, այնուհետև ազատ արձակվելով՝ խորհրդավոր ձևով սպանվում է Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Գյուտ եպիսկոպոս Տեր-Ղազարյանը: Նա պայքարում էր Սևանա վանքը և վանականների միաբանությունը պահպանելու համար՝ բանավիճելով Սարգիս Կասյանի հետ: Ամբողջ կյանքում Հայ Եկեղեցուն ազնվորեն ծառայած այս նվիրյալը, բանտում չդիմանալով կտտանքներին, տեղի տվեց և ստորագրեց Եկեղեցու՝ որպես «հակախորհրդային որջի» վերաբերյալ պատրաստի ցուցմունք-վկայությունների տակ: Ֆիզիկապես կեղեքված վիճակում, առողջությունը քայքայված՝ նա բանտից ազատ է արձակվում, սակայն որոշ ժամանակ անց չեկիստները նրան սպանում են. մահվան պատճառ է արձանագրվում մեծ չափի մորֆիից թունավորումը:

1928 թ. Զանգեզուրի կռիվներում դաշնակցականներին օգնելու համար բանտարկվում և գնդակահարվում է Մազրա գյուղի քահանա Գրիգոր Տեր-Գրիգորյանը, իսկ նրա՝ տասը հոգուց բաղկացած ընտանիքը համարվում է հակախորհրդային տարր և աքսորվում Հայաստանից:

Բազմազավակ որոշ հոգևորականներ անհատական հարկերի տակ ընկան՝ մատնվելով սովի և չքավորության, ինչպես Մեծ Շահրիար գյուղի քահանա տեր Մխիթարի իննհոգանոց ընտանիքը, որի քահանայական եկամուտը 400 ռուբլի էր, անհատական հարկը՝ 350:

Տարեցտարի ամայանում էր Մայր Աթոռը, ծանրագույն կացության մեջ, սակայն, Եկեղեցին չէր կորցնում իր ազգային և հոգևոր դիմագիծը. կատարվում էին եկեղեցական տոները, նշվում էր Հայոց ցեղասպանության օրը՝ Ապրիլի 24-ը՝ կրկնակի հարձակումների տեղիք տալով:

Ամենայն Հայոց Վեհափառ Գևորգ Ե-ն հասկանում էր, որ ահագնացող հալածանքների պայմաններում պետք է փրկել աչքի ընկնող հոգևորականներին՝ նրանց արտասահման գործուղելով, և հարմար առիթ էր փնտրում հայրենասեր եկեղեցական և գիտնական Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանին արտերկիր ուղարկելու, սակայն դա չհաջողվեց նրան, և միայն 1934 թ. հուլիսին Խորեն Ա Կաթողիկոսին վերջապես հաջողվեց արդեն Գերագույն հոգևոր խորհրդի նախագահ Գարեգին արքեպիսկոպոսին ուղարկել արտասահման՝ որպես Մայր Աթոռի նվիրակ և լիազոր ներկայացուցիչ սփյուռքի թեմերում՝ այդպես փրկելով նրան ստալինյան բռնադատումներից:

Ինչպես խորհրդային բոլոր երկրներում, Հայաստանում ևս հակաեկեղեցական պայքարն ուղեկցվում էր անաստվածության քարոզով և աստվածամերժ միությունների ու խմբակների ստեղծումով: Հայաստանում այդ տարիներին եռանդուն գործում էին «Անաստվածների միությունը», «Ազատ եկեղեցական եղբայրությունը» և այլն, լույս էր տեսնում «Անաստված» ամսագիրը: Կառավարության կողմից նույնիսկ որոշ եկեղեցիներ՝ այդ թվում Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչը, խլվում էին Մայր Աթոռից և հանձնվում «Ազատ եկեղեցական եղբայրությանը», որին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Սուրենյանցը 1926 թ. Եկեղեցուց անջատ հայտարարեց և նզովեց:

Մայր Աթոռի դեմ այս կործանարար արշավը բուռն ընդվզման տեղիք տվեց սփյուռքում, որտեղից Հայաստանի իշխանություններին ուղղված բողոք-նամակներով հանդես եկան թեմական խորհուրդներ և առաջնորդներ, ինչպես Ատրպատականի հայոց թեմը՝ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի առաջնորդությամբ՝ դատապարտելով Մայր Աթոռի՝ համազգային կենտրոն լինելու գաղափարն ու Ամենայն Հայոց Կաթողիկոսի իրավունքները ոտնակոխ անողներին, ազգային միությունը խորտակողներին և ժողովրդին պառակտողներին, իշխանության հովանավորությամբ հերձվածողների կողմից ազգային Եկեղեցու ունեցվածքի բռնագրավումները:

Հայաստանում, Արցախում, առհասարակ Խորհրդային Միության երկրներում գործող հայկական եկեղեցիները, ինչպես նշեցինք, փակվում էին՝ վերածվելով ախոռների, ակումբների կամ թատրոնների: 1929 թ. դեկտեմբերի դրությամբ՝ Դարալագյազի շրջանում 31 եկեղեցիներից փակվել են 25-ը, վերաբացվել է 8 եկեղեցի, որոնք էլ ավերակ վիճակում էին: Լոռի-Փամբակում փակվել է 26, Զանգեզուրում՝ 15 եկեղեցի, Իջևանում այլևս գործող եկեղեցի չկար. փակվել էին բոլոր՝ 33 եկեղեցիները: 1946 թ. վիճակագրությամբ՝ Հայաստանում գործում էին ընդամենը 14 եկեղեցի և 6 վանք: 1947 թ. Էջմիածնի միաբանությունը բաղկացած էր 3 եպիսկոպոսից և 7 վարդապետից:

1930 թ. վախճանվում է ստալինյան բռնաճնշումների դեմ բանակցություններով և բողոք-դիմումներով կռիվ տվող Գևորգ Սուրենյանց հայրենասեր Կաթողիկոսը: Կաթողիկոսական գահը թափուր է մնում, և Հայաստանում բոլշևիկները նոր թափով են շարունակում եկեղեցիների և վանքերի ավերումը: 1930 թ. պայթեցվեց Երևանի Սիմեոն Ծերունի եկեղեցին, պատրաստվում էին քանդելու նաև Պողոս-Պետրոս եկեղեցին՝ 17-րդ դարի ճարտարապետական արվեստի այդ ինքնատիպ շինությունը, որի դեմ հանդես եկան Հուշարձանների պահպանության կոմիտեի նախագահ Ալեքսանդր Թամանյանը և գիտքարտուղար Աշխարհաբեկ Քալանթարյանը՝ Հայաստանի լուսժողկոմ Ա. Եղիազարյանին նամակով կոչ անելով պահպանել Երևանի հին դեմքը ներկայացնող այդ հազվագյուտ հուշարձանը:

Երկարատև համառ պայքարից հետո՝ 1932 թ. նոյեմբերի 12-ին, վերջապես հաջողվեց կազմակերպել կաթողիկոսական ընտրություններ, և մեծ դժվարությամբ գահակալ ընտրվեց իշխող վարչակարգի կողմից «դաշնակ», «ազգայնամոլ» դիտարկվող, սկզբունքային և հայրենասեր Խորեն Ա Մուրադբեկյանը (Տփղիսեցի), որը մինչ այդ անցել էր հայրենիքի ճակատագրով մտահոգ, ազգային դիմագիծ ունեցող եկեղեցական գործչի ուշագրավ ճանապարհ: Խորեն Մուրադբեկյանի հեղինակությունը հաղթեց խորհրդային իշխանության ճնշումներին, և Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների 51 ձայնով նա ընտրվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս (Պետանվտանգության նախընտրած թեկնածուն, որ Գարեգին արքեպիսկոպոս Չորեքչյանն էր, վաստակեց ընդամենը մեկ ձայն):

1933 թ. աղմկոտ ու բաց դատավարություններ կազմակերպվեցին հոգևորականների դեմ՝ նրանց հռչակելով կուլակներ և ժողովրդի թշնամիներ, նպատակ ունենալով վերջնականորեն Եկեղեցին վարկաբեկել ժողովրդի աչքում, իբրև թե քաղցած ժողովրդին վերադարձնելու եկեղեցականների թաքցրած հացը: Բազմաթիվ գյուղական քահանաներ ազատազրկվեցին և ունեզրկվեցին կամ տուգանվեցին:

1935 թվականից սկսած՝ քաղաքական մեղադրանքներն ավելի ուժգին թափ առան: Խուզարկություններ սկսվեցին եկեղեցականների տներում, բանտերն ու աքսորները համալրվեցին նոր հոգևորականներով: Հակակրոնական գրոհները սաստկացան նաև մամուլում, եկեղեցիների ավերումը նույնպես շարունակվում էր. ցուցակում հայտնվեց նաև Երևանի Կաթողիկե եկեղեցին:

1936 թ. հուլիսի 9-ին քաղաքական մեղադրանքների զոհ դարձավ նաև Հայաստանի Կոմկուսի գլխավոր քարտուղար Աղասի Խանջյանը. նրա մահը ազգային դիմագիծ ունեցող հայ մտավորականությանն սպառնացող համատարած մահվան գույժն էր: Պատահական չէ, որ ուղիղ մեկ ամիս հետո՝ օգոստոսի 9-ին, տեղի ունեցան մասսայական ձերբակալություններ:

Հակազգային և հակաեկեղեցական գրոհն իր գագաթնակետին հասավ 1937 թվականին: Միայն Էջմիածնի կաթողիկոսարանի 75 սպասավորներից կալանավորվեցին 70-ը: Դրված էր նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսի վերացման հարցը. Եկեղեցին պետք է գլխատվեր առաջնորդից:

1938 թ. Հայաստանի ժողկոմխորհը որոշում է ընդունում Էջմիածնի վանքից հարկեր գանձելու մասին, ինչը եռապատիկ գերազանցում էր Մայր Աթոռի եկամուտները, պահանջվում էր վճարել նաև 1936—1937 թթ. պարտքերը՝ ավելի քան 200 հազար ռուբլի: ➥ էջ 7

Յակոբ Պատրիարք Նալեան. Մեղքերու մասին ընդհանրապէս

Սկիզբը՝ 2025 թ. թիւ 6

ԽՆԴԻՐ Դ

Ներգործական մեղքերուն մասին

Ներգործական մեղքը անմիջապէս եւ կամաւոր կերպով գործուող մեղքն է, Աստուծմէ՝ անփոփոխ բարիէն հեռանալէն, ինչպէս նաեւ դէպի փոփոխական բարին դառնալէ ետք: Արդ, անմիջապէս, այն պատճառով կ'ըսուի, որովհետեւ թէեւ սկզբնական մեղքն ալ կամաւոր է, քանի որ մենք բոլորս մեր արմատէն՝ Ադամէն եղանք. ան երբ իր կամքով Աստուծոյ անհնազանդեցաւ, մենք եւս՝ մեր հօր [Ադամին] համար՝ անհնազանդ գտնուեցանք. սակայն, ոչ թէ մենք մեզմէ, այլ միջնորդութեամբ սերմին եւ ապականութեամբը ծնունդին, դէպի մեզի քաշեցինք Ադամին մեղքը:

Իսկ ներգործական մեղքը զանազան է: Նախ՝ որովհետեւ կամաւոր է: Երկրորդ՝ քանի որ առանց միջնորդի է:

Այս գազանը, որ է ներգործական մեղքը (որ մեր հոգիին կը թափանցէ ու կը մտնէ, եւ ինչ որ կը գործէ՝ մեր ներսիդին, մեր մէջ եւ մեր շուրջը կը գործէ) եօթը չարագոյն գլուխներ ունի: Ինչպէս ծովէն կը բխին եօթ մեծամեծ գետեր ու գետակներ. տակաւին, մեզի, որ մկրտութեան միջոցով սկզբնական մեղքէն ազատեցանք, ինչպէս նաեւ սատանայի գերութենէն եւ ատելութենէն ազատեցանք, որ [սակայն] Աստուծոյ բարեկամ եւ սիրելի եղած ատեն՝ կրկնելու պարագային անոր ներգործութեամբ մեզ գերի եւ ողորմելի կ'ընէ, թշնամի Աստուծոյ եւ բարկութեան որդի. որով եւ այլեւս մկրտութեամբ չենք կրնար ազատիլ (որովհետեւ մէկ է մկրտութիւնը եւ երբեք չի՛ կրկնուիր. թէեւ մարդ մը ուրացութենէն զղջայ՝ չի՛ կրնար դարձեալ մկրտուիլ). [ազատիլ կրնանք միայն] ապաշխարութեան արտասուքներու աւազանով, դառն զղջումով եւ ճշմարիտ խոստովանութեամբ:

Այս գազանին առաջին չար գլուխը հպարտութիւնն է:

Երկրորդը՝ նախանձը:

Երրորդը՝ բարկութիւնը:

Չորրորդը՝ ծուլութիւնը:

Հինգերորդը՝ ագահութիւնը:

Վեցերորդը՝ որկրամոլութիւնը:

Եօթներորդը՝ բղջախոհութիւնը:

Այս եօթը մեղքերը, նախքան Ադամին մեղանչելը, անոր մէջ չկային: Սատանային մէջ միայն կային հպարտութիւնն ու նախանձը: Իսկ Ադամ, այս եօթը մեղքերը սատանային թելադրութեամբ ծնաւ իր հոգիին մէջ՝ այս կարգով.

Նախ՝ որովհետեւ հպարտութեամբ անհնազանդ եղաւ Աստուծոյ: Երկրորդ՝ նախանձն ու բարկութիւնը թագաւորեցին Կայէնի մէջ: Երրորդ՝ Ադամին ու Եւային մէջ աստուածանալու ագահութիւնը ծնաւ, ինչպէս նաեւ Աստուծոյ անհուն գիտութեան հանդէպ փափաքը: Չորրորդ՝ ագահութենէն որկրամոլութիւնը յառաջացաւ: Հինգերորդ՝ որկրամոլութենէն, պտուղի ճաշակումը՝ բղջախոհութիւնը. որովհետեւ նախքան պտուղը ուտելը, ցանկութեան ինչ ըլլալը չէին գիտեր. այդ պատճառով ալ մերկ էին եւ չէին ամչնար ինչպէս անմեղ երեխաները: Սակայն երբ կերան ու մերկացան, բղջախոհութեան ցանկութիւնը իմացան եւ ամօթի պատճառով փախան: Ապա որպէս ծոյլեր ու աշխատելու անկարողներ՝ դրախտը պահելու, այդ պատճառով դրախտէն արտաքսուեցան:

Մեղքը եօթնագլուխ գազան մըն է,
եւ թունաւոր չար վիշապ:
Ով որ անոր ծուխին մօտենայ,
մահուան պարտաւոր կ'ըլլայ:

ԽՆԴԻՐ Ե

Մահացու առաջին մեղքի մասին, որ հպարտութիւնն է

Հպարտութիւնը պատիւի եւ փառքի նկատմամբ անկարգ ցանկութիւնն է: Հպարտը ան է, որ միշտ կը ջանայ բոլոր մարդոցմէ աւելի փառաւոր երեւիլ: Այդ պատճառով ալ իրմէ մեծ եղողին չի՛ հնազանդիր, քանի որ զայն իրմէ մեծ չի՛ համարեր: Իրեն հաւասարին հետ չի՛ կենցաղավարեր, որպէսզի չ'եղծուի: Իրեն հաւասար ո՛չ ոք կը ճանչնայ: Ինչպէս առիւծը ո՛չ մէկ կենդանիի հետ կը կատակէ իր հպարտութեան պատճառով, այսպէս ալ հպարտը, երբեք չըսեր, թէ ինծի պէս մարդ կայ: Ինչպէս փարիսեցին կ'ըսէր, թէ՝ այդ մարդուն նման չեմ: Տակաւին, հպարտը փոքրին նկատմամբ ինքզինք գազան ցոյց կու տայ, իսկ մեծին առջեւ՝ խաբեբայ աղուէս ու խորամանակ կը ձեւանայ, երբ կը տեսնէ, թէ չի՛ կրնար յաղթել ու նմանիլ իրմէ մեծ եղողին:

Արդարեւ, հպարտութիւնը շատ գարշելի է:

Նախ՝ որովհետեւ Աստուծոյ շնորհքը կը վերցնէ, քանի որ Աստուած ամբարտաւաններուն հակառակ է եւ շնորհք կու տայ խոնարհներուն:

Երկրորդ՝ որովհետեւ սատանան հպարտութեան պատճառով երկինքէն ինկաւ, իսկ Ադամ՝ դրախտէն:

Երրորդ՝ հպարտութիւնը Աստուծոյ ատելի է: Սողոմոնը կ'ըսէ, թէ Աստուծոյ համար իւրաքանչիւր մեծամիտ գարշելի է:

Չորրորդ՝ քանի որ հպարտութիւնը մարդուն հոգիէն ամէն տեսակի բարի բաները կ'արտաքսէ, եւ անոնց փոխարէն ամէն տեսակի չար բաներ կը բերէ: Տակաւին, ինչպէս խոնարհութիւնը մարդու հոգին ամէն տեսակի բարութեամբ ու առաքինութեամբ կը լեցնէ, ինչպէս Քրիստոս ըսաւ, թէ՝ մեզի վայել է արդարութիւն գործել, որ ամէն արդարութիւն խոնարհութիւն կը կոչէ, այդպէս ալ հպարտութիւնը ամէն տեսակի չար բան կը բերէ մարդու հոգիին. անհաւատարմութիւն, կամապաշտութիւն, հերձուածողութիւն, եւ ամէն տեսակի չարութիւն, քանի որ մեղքի մը հետ եթէ հպարտութիւն չըլլայ, ատիկա կատարեալ մեղք չէ:

Հինգերորդ՝ հպարտութիւնը սատանայի պատկերն է, ինչպէս խոնարհութիւնը՝ Քրիստոսի: Սատանան կ'ըսէ. ինձմէ սորվեցէք, որովհետեւ հպարտ եմ. իսկ Քրիստոս կ'ըսէ. Ինձմէ սորվեցէք, քանի որ հեզ եմ եւ խոնարհ:

Վեցերորդ՝ հպարտը գարշելի փքուածութեամբ լեցուած տիկ մըն է, որ ինչքան ձգռտայ, գարշահոտութիւն կը բուրէ բերանէն: Տեսիլքին մէջ կ'ըսուի, թէ՝ անդունդներու գուբին բերանը բացաւ, եւ գուբէն ծուխ կ'ելլէր, այսինքն՝ հպարտին բերանէն ամբարտաւանութեան ծուխ:

Եօթներորդ՝ հպարտը Գեղբուայ լեռն է, որ Դաւիթ մարգարէն ըսաւ, թէ՝ Գեղբուէի լեռներ ձեր վրայ անձրևի ցող թող չ'իջնէ, քանի որ հպարտ մարդու հոգիին մէջ Աստուծոյ շնորհքը չ'իջներ:

Ութերորդ՝ հպարտը Կափառնաւում քաղաքին նման է, որ թէեւ աշխարհի վրայ երկինք կ'ելլէ, [սակայն] դժոխք կ'իջնէ, ինչպէս Քրիստոս ըսաւ:

Իններորդ՝ հպարտութիւնը մարդուն գազան կը դարձնէ, ինչպէս է պարագան Նաբուգոդոնոսորի եւ Տրդատի:

Տասներորդ. հպարտութիւնը մարդուն դժոխքի ծովին մէջ կ'ընկղմեցնէ, ինչպէս փարաւոնը ընկղմեցաւ Կարմիր ծովուն մէջ: Երկինքէն կրակով կ'այրէ, ինչպէս [այրեց] Ահարոնին որդիները՝ Նաբադին ու Աբիուդին:

[Հպարտութիւնը] ողջ-ողջ դժոխք կ'իջեցնէ, ինչպէս Կորխն ու Սահառը՝ Մովսէսին ու Ահարոնին թշնամիները: Մարդուն խոզ ու դևերու բնակարան կը դարձնէ, ինչպէս որ Քրիստոս երբ դևերը կը հալածէր մարդէն, աղաչեցին Անոր ըսելով՝ երթանք ու խոզերուն մէջ մտնենք. իսկ երբ մտան, տարին ու ծովուն մէջ խեղդեցին: Ասոր պէս հպարտութիւնը մարդուն հոգին դժոխքի ծովին մէջ կը խեղդէ:

Հպարտը նոյնիսկ եթէ երկինք ելլէ,
երկինքն իսկ չի՛ հաւնիր:
Եթէ ի վիճակի ըլլար,
դժոխքին մէջ ալ չէր սքօղուէր:

➥ էջ 8

Գարնան այլաբանությունը գեղանկարչության մեջ

Եղանակների խորհրդանշայնացումը գրականության և արվեստի արարման ընթացքում արտացոլում է տարվա ռիթմը, հավերժական վերադարձը և այդ ընթացքի մի մասը լինելու գիտակցումը: Եղանակները խորհրդանշում են ինչպես ժամանակի անցումը, այնպես էլ բնական ռիթմերի կանոնավոր, անվերջ կրկնությունը: Նախնական իմաստով դրանք արտահայտում են մարդու չորս տարիքը, ինչը հայեցակարգային հիմք ունի արվեստում: Հայտնի է Վալանտեն դե Բուլոնի «Մարդու չորս տարիքը» կտավը (1526 թ.), ուր ամեն մեկը կերպավորում է մարդկային մի տարիք, իսկ մթնշաղի լույսի ու կերպարների առնչությունն արտահայտում է մարդկային կյանքի փիլիսոփայությունը, ժամանակի սրընթացությունը:

Տարվա բոլոր եղանակներն արվեստում ունեն գունապատկերային հատկանիշներ: Այսպես՝ գարունն ամենից հաճախ երիտասարդ կին է, որ ծաղկեպսակ է կրում, երբեմն երկու ձեռքով ծաղիկների ճյուղեր է պահում: Գարնանային բնապատկերը բնութագրվում է նաև հերկի ու ցանքսի տեսարաններով, կանաչապատ բացատներով կամ դաշտերով: Ամառը հիմնականում որոշվում է հացահատիկի կամ խոտի բերքի պատկերով, աշնան դեմքը զարդարում են խաղողի ողկույզներն ու բազմագույն տերևները, ձմեռը, որպես կանոն, անմիջապես ճանաչելի է ձյան միջոցով:

Գարունը քրիստոնեական ավանդությունում հաճախ առնչակցվում է վերածննդի, նորոգության և հարության հետ: Սա այն ժամանակն է, երբ բնությունն արթնանում է, և շատ արվեստագետներ օգտագործել են գարնան թեման՝ փոխանցելու այս խոր հոգևոր, կրոնական իմաստները: Արվեստի կոթողներում գարունը կամ գարնանային թեմաները կարևոր դեր են խաղում քրիստոնեական համատեքստում: «Հարություն» նկարում Պիեռ-Ժան Դավիթը, թեև որոշակի գարուն չի պատկերում, բայց ցույց է տալիս Քրիստոսի հարության պահը, որը ներկայացնում է հոգևոր և մարմնական վերածնունդը, որ նույնպես կապված է գարնան գաղափարի հետ՝ որպես նոր սկզբի և վերափոխման ժամանակի:

Էլ Գրեկոյի «Հարություն» պատկերում Քրիստոսը բարձրանում է գերեզմանից, և այդ տեսարանում գարունը խորհրդանշում է վերածնունդը, կյանքի հաղթանակը մահվան նկատմամբ: Հարության քրիստոնեական համատեքստը, զուգորդված գարնային պատկերների հետ, ստեղծում է նոր սկզբի, հոգևոր վերածննդի և հույսի խոր փոխաբերություն: Թեև Էդվարդ Բեռն-Ջոնսի «Եդեմի պարտեզը» ուղղակիորեն գարնան մասին չէ, նկարիչը պատկերում է Ադամին և Եվային դրախտային պարտեզում, որը լցված է ծաղիկներով, ծառերով և կենդանիներով, բայց ուսումնասիրողները կարծում են, որ այն կարելի է դիտարկել որպես բնության անաղարտ ներդաշնակության խորհրդանիշ, որն աշխարհի քրիստոնեական գաղափարի մի մասն է:

Քրիստոնեական գեղանկարչության մեջ նշանավոր է նաև Գուստավ Դորենի «Հրեշտակներ, որոնք ավետում են գարունը» կտավը, որտեղ հրեշտակները կրում են հարության և հույսի ավետիսը:

Ծաղկող այգիներում հրեշտակներով նկարները ներկայացնում են նոր սկզբի և կյանքի գաղափարը, որը նաև Հարության քրիստոնեական խորհրդանիշն է: Գարունը կապված է հույսի, նորացման, ներման և փրկության գաղափարների հետ, որոնք քրիստոնեական կրոնի հիմնական թեմաներն են՝ հատկապես Զատկի համատեքստում:

Դեպի աստվածայինն ու կատարյալը մարդկային ձգտումն իմաստավորվում է գարնանը: Այսպես կոչված Գալիլեայի գարունը աստվածաշնչյան մեկնաբանության մեջ արտահայտում է Նազովրեցի Հիսուսի գալստյան լուրը: Նրանք, ովքեր գործածում են հասկացությունը, ենթադրում են, որ դա եղել է մեծ հիացմունքի շրջան: Հին նկարիչներն արդեն վերակերտում էին եղանակները դիցաբանական պատկերների կամ կերպարների, ծաղիկների, մրգերի և առարկաների միջոցով: Անտիկ արվեստում գարունը (Ֆլորա//Դիանա) ներկայանում է կանաչ մարգագետնում վայրի ծաղիկներ ցրող երիտասարդ կնոջ կերպարով: Կամ դա լինում է ծաղիկների և մրգերի ծաղկեպսակով երեխա, երբեմն՝ ծաղիկները ձեռքին երիտասարդ:

Բնության ու մարդու ներքին կապի, դրա աստվածային բովանդակության ճանաչմանն են ծառայել Վերածննդի բոլոր արվեստագետները: Վերածննդի դարաշրջանը, որն առավել ցայտուն դրսևորվեց Իտալիայի հյուսիսում՝ մշակութային խոշոր կենտրոններում՝ Ֆլորենցիայում, Վենետիկում, առաջ բերեց նոր գաղափարներ՝ հիմնված հին հույների, Պլատոնի, Պյութագորասի, Հոմերոսի և Վիրգիլիոսի իմաստասիրության վրա, որոնք ուղղված էին մարդու երկրային աշխարհին, հոգևոր որոնումներին:

Անտիկ առասպելներով առաջինը հետաքրքրվեց Սանդրո Բոտիչելլին, որն ստեղծեց կրոնական թեմայով պատկերներ: Նա առաջինն իր ստեղծագործություններում այլաբանորեն անդրադարձավ երևույթներին ու իրերին: Այս առումով ամբողջ աշխարհում որպես գլուխգործոց է հայտնի նրա «Գարունը»: Վերջինս Բոտիչելլին կերտել է կյանքի ամենաբեղմնավոր շրջանում՝ Մեդիչիների ընտանիքի պատվերով: Չնայած այս աշխատանքը չունի քրիստոնեական հստակ թեմա, այն ոգեշնչված է դիցաբանությունից, բայց նկարիչն օգտագործում է դիցաբանական կերպարներ, ինչպիսին է Ֆլորան՝ գարնան աստվածուհին ՝ նորացման և վերածննդի գաղափարները փոխանցելու համար, ինչն արձագանքում է հարության և նոր կյանքի քրիստոնեական պատկերացումներին: Նկարը մեկնաբանվում է որպես բնության գարնանային հարության խորհրդանիշ, ինչը քրիստոնեության համատեքստում կարելի է համեմատել Հիսուսի հարության հետ:

Կոմպոզիցիայի կենտրոնում աստվածուհի Աֆրոդիտեն (Վեներան) հանգիստ քայլում է խոտաբույսերի ու ծաղիկների գորգի վրայով: Քրիստոնեական թեման ներկայացվում է հենց նրա կերպարով՝ կենտոնական դիրքում, մրտենու տերևների պսակներով և մրտենու թփի ու նարնջի ծառերի միջև ազատ թողած տեղերով: Ոմանք կարծում են, որ նկարի աջ կողմը դիտվում է որպես մարմնական սիրո, ձախը՝ մերձավորի հանդեպ սիրո այլաբանություն, կենտրոնը՝ ավելի բարձր՝ առ Աստված սիրո այլաբանություն: Մեկ այլ վարկածի համաձայն՝ նկարիչը պատկերել է երկրային դրախտով անցած ճանապարհորդության այլաբանություն՝ մուտք աշխարհ, ճամփորդություն այգու միջով և ելք դեպի դրախտ: Նկարում պատկերված բոլոր կերպարները համարյա չեն դիպչում գետնին, տպավորություն է՝ սավառնում են դրա վրա: Թեթևության զգացողությունն ավելի է ընդգծվում նկարի բարձր դիրքով: Փորձագետները կարծում են, որ իտալացի մեծ վարպետը ոգեշնչվել է հռոմեացի բանաստեղծ Օվիդիուսի և բանաստեղծ, փիլիսոփա Լուկրեցիուսի ստեղծագործություններից: ➥ էջ 7

Անտիկ որմնանկար, «Ֆլորա», Ք. ծ. ա. 1-ին դար

Գարնան այլաբանությունը գեղանկարչության մեջ

↩ էջ 6

Գիտնականները մինչ օրս միակարծիք չեն, թե իրականում ինչ է ցանկացել նկարիչը պատկերել կտավում: Ըստ ոմանց՝ դա այլաբանական կտավ է, որտեղ Վեներան հայտնվում է որպես սիրո հովանավոր՝ ինչպես երկրային, այնպես էլ երկնային, Զեֆիրն ու Ֆլորան անձնավորում են մարդկային զգացմունքները, երեք գրացիաները ներկայացնում են բանականությունը, իսկ Մերկուրին մարմնավորում է հանգիստ խորհրդածություն, առանց որի՝ իրական իմաստությունն անհնար է: Հետևաբար՝ պատահական չէ, որ Զեֆիրի շարժումներն ուղղված են դեպի ներքև, իսկ Մերկուրիինը՝ վերև, այսինքն՝ զգացմունքները մարդուն միշտ գրավում են դեպի երկիր, իսկ միտքը բարձրացնում է դեպի երկինք:

Այլ փորձագետներ կարծում են, որ Բոտիչելլին նկարում պատկերել է Հեսպերիդների հիասքանչ այգին: Հին Հունաստանում Հեսպերիդներ կոչում էին երեկոյան աստղ Հեսպերի և գիշերվա աստվածուհի Նյուկտայի դուստրերին: Ըստ լեգենդի՝ այս գեղեցիկ օրիորդներն ապրում էին հեռու՝ արտերկրում՝ նույն տարածաշրջանում, որտեղ ապրում էին սարսափելի հրեշները՝ Գորգոնները: Նաև որոշ փորձագետներ կարծում են, որ Բոտիչելլին նկարում պատկերել է իր ժամանակակիցներին: Կտավի վերաբերյալ միջնադարյան և Վաղ Վերածննդի արվեստի գիտակ Դանիելա Պարենտին ներկայացրել է գարնան այլաբանության հետաքրքիր և ուսանելի փաստեր: Նախ՝ նկարի հերոսները ճանաչում են ձեռք բերել միայն 19-րդ դարի վերջին: Չնայած Բոտիչելլին իր կյանքի ընթացքում բավականին սիրված և հարգված էր, բացառությամբ 16—17-րդ դարերի արվեստի պատմության տեքստերում հազվագյուտ հիշատակումների՝ գործը հիմնականում մոռացվել է մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը: Ջորջո Վազարին Բոտիչելլիի կենսագրության մեջ հիշում է Վիլլա Կաստելլոյում կախված նկարը՝ հայտնելով, որ այն համապատասխանում էր գարնան այլաբանությանը, և նկարագրելով «Վեներայի ծննդյան» հետ միասին:

Պարենտիի հաջորդ փաստումը վերաբերում է Վեներային, որին Բոտիչելլին պատկերել է բազմաթիվ առումներով: Բոտիչելլիի գարնան այլաբանության մեջ Վեներան իր ունեցվածքի տիրուհին է և հագած է դշխոյական զգեստ՝ տարածելով սեր, ներդաշնակություն և բնության վերանորոգ ուժ: Նա կրում է կապույտ զգեստ և կարմիր թիկնոց: Գունային այս համադրությունն ունի նաև Մարիամ Աստվածածնի հագուստը: Հետաքրքիր բացատրություններ է տալիս արվեստագետը ծաղիկների մասին: Ըստ ուսումնասիրության՝ այստեղ պատկերված են հարյուրավոր տարբեր ծաղիկներ, այդ թվում՝ վարդեր, անմոռուկներ, հիրիկներ, մեխակներ, շուշաններ, կակաչներ, երիցուկներ, հասմիկներ և այլն: Դա բնության առատաձեռնության տոն է, բայց այս ծաղիկները նշանակում են ավելին, քան պարզապես եղանակների փոփոխություն: Դրանց իմաստը կարող է տարբեր լինել՝ կախված նրանից, թե դրանք ո՞ր համատեքստում են դիտարկվում՝ հեթանոսական, թե՞ քրիստոնեական:

Մեխակները, երիցուկները և հասմիկները խորհրդանշում են սերն ու ամուսնությունը, կակաչները՝ բարգավաճումը և պտղաբերությունը, իսկ քրիստոսածաղիկը՝ ծննդյան վարդը, որը համարվում է հավերժական երիտասարդության ավետաբեր, կարող է նաև բուժել անպատասխան սիրո պատճառած խելագարությունը: Նարինջներն ու նարնջի ծաղիկը նույնպես խորհրդանշում են ամուսնությունը, քանի որ Յունոնան դրանք որպես օժիտ առաջարկել է Յուպիտերին, իսկ Վեներայի ոտքերի մոտ գտնվող վարդերը ներկայացնում են նրա մաքրությունն ու աստվածային բնույթը: Այնուամենայնիվ, իմաստային բովանդակության մասին գիտնականները մինչ օրս համաձայնության չեն եկել:

Գարնան այլաբանությունը գիտական տեսանկյունից ունի փիլիսոփայական ենթատեքստ: Անկախ նկարի իրական նշանակությունից՝ գիտնականները համաձայն են, որ գարնան այլաբանության մեջ առկա է նեոպլատոնական բաղադրիչ: Նեոպլատոնական փիլիսոփայությունը մեծ տարածում գտավ 15-րդ դարում Ֆլորենցիայում, քանի որ այն դասական հնությունը հաշտեցնում էր քրիստոնեության հետ: Նրանք, ովքեր հավատարիմ էին դրան, հավատում էին, որ գեղեցկության մասին մտածելը սիրո զգացողություն է առաջացնում, որը մարդուն ավելի է մոտեցնում Աստծուն: Չնայած անհասկանալի է, թե որքանով էր Բոտիչելլին ծանոթ կրոնական փիլիսոփայությանը, նրա նկարների դիպաշարերն ունեն վերացական և իդեալականացված գեղեցկություն և մեծ ժողովրդականություն էին վայելում նեոպլատոնիզմի հետևորդների շրջանում:

Գեղանկարչության մեջ գարնան իմաստն են արտահայտում նաև հռչակավոր նկարիչ Ռեմբրանդտի «Ֆլորա», «Սաքսիան Ֆլորայի կերպարով» նկարները: Ռեմբրանդտը երեք անգամ նկարել է իր կնոջը՝ Սասկիա վան Էյլեբյուրգին՝ որպես բուսական աշխարհի, գարնան և ծաղիկների աստվածուհու: Երկրորդ կտավում նա միացրել է հովվական և պատմական դիմանկարի տարրերը: Նկարը, որն ստեղծվել է նրանց հարսանիքի տարում, արտահայտում է այն սերն ու հիացմունքը, որ նկարիչն զգացել է երիտասարդ կնոջ հանդեպ: Վերջինիս ամաչկոտ կեցվածքի և նրա ճոխ, ասեղնագործ հագուստի ու զարդերի շքեղության միջև հակադրությունը հատուկ հմայք է հաղորդում պատկերին: Աղջիկը գարնան անձնավորումն է, նրա փարթամ, մուգ գանգուրները զարդարված են շքեղ ծաղիկներով, նրան շրջապատում են կանաչապատ ծառերով ժայռերը: Կլորացված դեմքի արտահայտությունը մտածված է. այն արտահայտում է պայծառ տխրություն. կարծես աստվածուհին ոգով տեղափոխվել է անսահմանության հեռավոր տարածքներ:

19-րդ դարում բնությունից նկարելու ունակությունը հնարավորություն տվեց ավելի վստահորեն աշխատել գույնի հետ, օրվա տարբեր ժամերին նկատել լույսի և ստվերի նուրբ խաղը: Իմպրեսիոնիստները, որոնք կարևորել են ակնթարթային տրամադրության փոխանցումը, նույնպես անդրադարձել են գարնան թեմային: Ամենահայտնի կտավներից է Կլոդ Մոնեի «Պտղատու այգին գարնանը» կտավը: Նկարում ծաղկող ծառերը վերածվում են գունային անուշաբույր համանվագի: Ծառերի տակ նստած փխրուն կինը մնում է որպես հույսի, նոր կյանքի և ուրախության խորհրդանիշ:

Գարնան թեմային անտարբեր չի մնացել նաև Վինսենթ վան Գոգը: Չնայած նրա վիատ, մուրացկան կյանքի ակնհայտ մռայլությանը և նրան, որ բավական ժամանակ է անցկացրել հոգեբուժական հաստատություններում ու առողջարաններում, Վան Գոգի կտավները լի են լավատեսությամբ և աշխարհի նկատմամբ հիացմունքով: Ծաղկած ծառեր նա սկսեց ստեղծել՝ իմանալով եղբոր՝ Թեոյի ընտանիքում համալրման մասին: Նուշի ճյուղերն առաջիններից են, որոնք բացվում են գարնանը, ինչը պետք է դառնար նոր կյանքի խորհրդանիշ: Ամբողջ կտավը հագեցած է գույներով, իսկ գծերի հստակության մեջ, ըստ ուսումնասիրողների, զգացվում է ճապոնական արվեստի ազդեցությունը: Վան Գոգի գարունը լի է լույսով, վառ գույներով: Հայտնի են նրա «Ծաղկած այգի», «Ծաղկող դեղձենի», «Ծաղկած տանձենիներ», «Սպիտակ այգի» և այլ կտավներ: Նկարչի սիրած կանաչին և կապույտին ավելացել են ոսկեգույնը, նարնջագույնը, մարջանի, կիտրոնի դեղինի երանգները: Ծաղկած ծառերը յուրահատուկ նշանակություն են ունեցել Վան Գոգի համար. դրանք զարթոնք և հույս են խորհրդանշել: Դրանցից նա գեղագիտական հաճույք է ստացել ու ծառերը պատկերելու մեջ ուրախություն գտել: Ծաղկած ծառերը Վան Գոգի համար հոգևոր վերածննդի աղբյուր են եղել:



Սանդրո Բոտիչելլի, դրվագ «Գարուն» կտավից, 1480—1483 թթ.

Սիրվարդ ՍՏԵՓԱՆՅԱՆ, բ. գ. թ.

Հայ հոգևորականության բռնադատումները....

↩ էջ 5

Մայր Աթոռը զրկված էր հիմնական եկամուտներից, դրան գումարված բարձր հարկերի պայմաններում նա ուղղակի դատապարտվում էր տնտեսական քայքայման:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Ա-ն՝ սկզբունքային, հայրենասեր, ըմբոստ ազգային-հոգևորական այդ գործիչը, ամեն կերպ պայքար էր ծավալում խորհրդային իշխանության վարած հակաեկեղեցական քաղաքականության դեմ՝ ոչ մի ջանք չխնայելով՝ փրկելու հնարավորը, այդ ճանապարհին տեղի չտալով իրեն սպառնացող ոչ մի վտանգի առջև: Նա կոնդակով դիմում է Հայաստանի Կենտգործկոմի նախագահին՝ խնդրելով նյութական ծանրագույն վիճակում գտնվող Մայր Աթոռն ազատել հարկերից: Դիմումը մերժվում է, իսկ Կաթողիկոսի նկատմամբ բացահայտ հաշվեհարդար են իրականացնում. 1937 թ. գնդակահարվում են Կաթողիկոսի երկու եղբայրները՝ Լևոն և Սերգեյ Մուրադբեկյանները:

Աղասի Խանջյանի հետ միասին Խորեն Ա Կաթողիկոսը պայքարում էր Հայոց պետականության և Հայոց Եկեղեցու գոյության համար: Սակայն երկու հայրենանվեր առաջնորդներին էլ խորհրդային իշխանությունները վերացրին: Պետանվտանգության գործակալները 1938 թվականի ապրիլի 6-ին Խորեն Ա Կաթողիկոսին հոսանքի լարով խեղդամահ արեցին Վեհարանի իր բնակարանում, իսկ Աղասի Խանջյանին 1935 թ. հուլիսի 9-ին Թիֆլիսում սպանեց Լավրենտի Բերիան: Երկու սպանություններն էլ պաշտոնապես ներկայացվեցին կեղծ մեկնաբանություններով. Ա. Խանջյանի ողբերգական վախճանը ներկայացվեց որպես ինքնասպանություն, իսկ Խորեն Ա Կաթողիկոսի սպանությունը՝ սրտի կաթվածից մահ:

Կաթողիկոսի մահվան մասին սփյուռքի մամուլում հրատարակվել են տարբեր, երբեմն հակասական տեղեկություններ: Առավել շրջանառվող վարկածով՝ Վեհափառ Հայրապետին Չեկայի մարդիկ խեղդամահ են արել՝ Մայր Աթոռի գանձատան բանալիներն իրենց չհանձնելու պատճառով: Չեկիստները պահանջել են հանձնել Էջմիածնի թանկագին գանձերը, ոսկյա, արծաթե անոթները, ադամանդները, արժեքավոր մատանիները և այլն, շրջափակել են Վեհափառին և բռնի ուժ գործադրելով՝ բանալիները ձեռքից խլել:

Փարիզի «Յառաջ»-ը 1938 թ. մայիսի 10-ի համարում այդ առթիվ գրում է. «Զուր են անցնում տարաբախտ կաթողիկոսի օգնութեան կանչերը եւ անզօր դիմադրութիւնը.... Չեկիստները ի վերջոյ նրան խեղդամահ են անում եւ հեռանում: Ասում են, թէ դժբախտ կաթողիկոսին խեղդել են վերջին աստիճանի վայրագ կերպով, ուղղակի ձեռքերով սեղմել են կոկորդը եւ խեղդել են: Դիակը մնում է ինկած գետնի վրայ....

Կաթողիկոսին դիակը ուռած, կապտած, չարչրկուած ամբողջ երեք օր փռուած մնում է վեհարանի դահլիճում: Վանականներից ոչ մէկը, մինչև իսկ Գերագոյն հոգևոր խորհրդի անդամները չէն համարձակում մօտենալ դիակին, որ արդէն սկսել էր հոտիլ: Չորրորդ օրը վանքում ապրող մի քանի ողորմելի կոյսեր, մեծ դժուարութեամբ վանքի բակում մի փոս են փորում եւ նահատակ կաթողիկոսի դիակը վեհարանից իջեցնելով թաղում են առանց եկեղեցական արարողութեան»:

Ի դեմս Ամենայն Հայոց Խորեն Ա Կաթողիկոսի՝ Հայ Առաքելական Եկեղեցին կորցնում է իր արժանավորագույն առաջնորդին՝ անբասիր բարոյականության տեր, հայրենանվեր, անձնուրաց զավակին:

Խորեն Ա Կաթողիկոսի մահվան ու հուղարկավորության մասին ԳՀԽ-ի անդամ Արսեն արքեպիսկոպոսն իր՝ 1938 թ. ապրիլ 19-ի հետին թվով զեկուցագրում կցկտուր հաղորդում է. «....Հարկավորը տնօրինեցի հոգելույս Հայրապետի թաղման մասին, երբ տեսա՝ թաղումն հապաղելն անտեղի է: Տեր Խորեն Կաթողիկոսի մահն հաղորդվեց ավանդական երրորդը՝ հնչեցնելով, ապա հրավիրվեցին միաբան եղբայրները Վեհարան, ու նրանց հաղորդվեց Հայրապետի մահը եւ Հայրապետական կոնդակով տ. Գևորգ արքեպիսկոպոսին տեղակալ նշանակելու մասին: Դագաղի եւ թաղման այլ պարագաների առթիվ կարգադրություններ անելուց հետո նույն օրը երեկոյան ժամասացությունը կատարվեց, առաջին հոգեհանգիստն ու ամբիծքը: Դագաղը հազիվ գիշերվա ժամը մոտ 10-ը հասնելու պատճառով հուղարկավորությունը կատարվեց հետևյալ օրը՝ ապրիլի 7-ին, Վեհարանից դեպի Գայանե վանքը, որի գավթումն էլ սուրբ պատարագից եւ եկեղեցական պատշաճ արարողությունից հետո հավատացյալների ստվար բազմության ներկայությամբ կատարվեց ամփոփումը հանգուցյալ Հայրապետի»:

Խորեն Ա Վեհափառի սպասավոր Գեղամ Կլեկչյանը Վեհափառ Հայրապետի մահվան տեսարանի մասին պատմում է. «Մտա Վեհի ննջարանը, տեսա նրան անկողնում մեռած.... Երբ անցա մեծ դահլիճ, աչքիս ընկան էլեկտրական լարերի կտորտանքները, զարմացա, թե այդ կտորտանքները որտեղից են հայտնվել»:

Պատմում են նաև, որ ոճրագործության հետքերը կորցնելու նպատակով փորձ է արվել Կաթողիկոսին զինվորների միջոցով թաղել անհայտ մի տեղ, բայց հավատացյալ մի քանի կանանց շնորհիվ դա չի իրականացվել:

Խորեն Ա Կաթողիկոսին շտապ հուղարկավորում են Սուրբ Գայանե եկեղեցու գավթում: Երեք տարի անց՝ 1941-ին, կաթողիկոսական տեղապահ Գևորգ արք. Չորեքչյանի հրամանով՝ Հայրապետի աճյունը վերամփոփվում է Ս. Գայանեի վանքի ավագ դռան մոտ և միայն 1996 թ. սեպտեմբերին Վեհափառին վայել պատիվներով տեղափոխվում էջմիածնի Մայր տաճարի բակ՝ արժանի տեղ գտնելով Հայոց Կաթողիկոսների շիրիմների կողքին:

Խորեն Ա Վեհափառի սպանությունից հետո կաթողիկոսական գահը թափուր մնաց ավելի քան յոթ տարի: Նրա սպանությունից չորս ամիս անց՝ օգոստոսի 4-ին, Հայաստանի Կոմկուսի կենտկոմի բյուրոյի նիստը որոշում է. «Հաշվի առնելով, որ եղած նյութերը մերկացնում են Էջմիածնի կաթողիկոսության ակտիվ պայքարը խորհրդային իշխանության և հայ ժողովրդի դեմ, փակել Էջմիածնի վանքը՝ այն վերածելով թանգարանի, նոր կաթողիկոսի ընտրություններ չանցկացնել և լիկվիդացնել հայ հոգևորականության կենտրոն Էջմիածնի Կաթողիկոսությունը»: Նույն օրը այս մասին նամակ էր հղվել Ստալինին՝ կայացված որոշումը հաստատելու խնդրանքով:

Սակայն Հայոց Եկեղեցին շարունակեց ծանրագույն վիճակում անգամ գոյատևել: Յոթ տարվա ընդմիջումից հետո՝ 1945 թվականին, խորհրդային իշխանությունն ի վերջո թույլատրեց անցկացնել կաթողիկոսական ընտրություն:

Հերմինե ՍԱՀԱԿՅԱՆ

Յակոբ Պատրիարք Նալեան. Մեղքերու մասին ընդհանրապէս

➥ էջ 6

ԽՆԴԻՐ Զ

Մահացու երկրորդ մեղքի մասին, որ նախանձն է

Նախանձը ուրիշին բարիքը չհանդուրժելն ու ուրիշներուն բարիք չկամենալն է, ինչպէս նաեւ ջանալն է բարիէն զրկել: Դարձեալ՝ նախանձը ցաւիլ է ուրիշներու երջանկութեան եւ բախտաւորութեան վրայ, ու տրտմիլ՝ ուրիշներուն բարիքին վրայ: Ինչպէս Կայէնը, երբ տեսաւ, թէ Աբէլին պատարագը Աստուծոյ հաճելի եղաւ, տրտմեցաւ եւ գլուխը կախեց նախանձին պատճառով: Այս մէկը յստակ է, թէ նախանձոտը այնքան ատեն, որ կը նախանձի, ինքզինք կը հալէ ու կը մաշէ, ինչպէս կ'ըսէ Սիրաք Իմաստասէրը, թէ նախանձոտը ի՞նչ բանի աչք ունի, որ բոլոր բարիքներուն վրայ հոգոց կը հանէ ու իր աչքերով կ'արտասուի. տակաւին, իր դրացիին գիրութենէն՝ ինք կը նիհարնայ ու կը տկարանայ, ինչպէս նաեւ օտարին բարիքներով՝ կը չարչարուի:

Նախանձոտը ո՛չ միայն ուրիշներուն բարիք չի՛ կամենար, այլև ինքն իր բարիքն ալ չի՛ կամենար, ինչպէս հրեաները Քրիստոսի համար կ'ըսէին, թէ՝ ի՞նչ ընենք, որովհետև այդ մարդը բազմաթիւ նշաններ [հրաշքներ] կը գործէ: Քրիստոսի հրաշքները, արդարև, իրենց համար օգուտ էր, սակայն նախանձի պատճառով կը կամենային կոյր մնալ, մեռելի նման հոտիլ, խուլ ըլլալ, համր կենալ, քան թէ Քրիստոսի հրաշքները տեսնել, ինչպէս Սողոմոնի բերանով կ'ըսէին, թէ՝ մեզի համար ծանր է զինք տեսնելը: Այսպէս՝ օր մը թագաւոր մը երկու նախանձոտներու ըսաւ, թէ՝ ձեզի ի՞նչ պատիժ տամ. մէկը ըսաւ, թէ՝ իմ մէկ աչքս հանէ, իսկ անոր՝ երկու աչքերը:

Դարձեալ՝ [նախանձոտը] չի՛ կամենար ուրիշներուն բարիքը տեսնել, ինչպէս որ Յովսէփին եղբայրները չէին կամենար տեսնել ո՛չ Յովսէփի ծաղկեայ պատմուճանը եւ ո՛չ ալ զինք: Դարձեալ՝ նախանձոտին աչքը չար է, որովհետև արիւնարբու օձին նման՝ աչքով մարդ կը հալէ, եւ ուրիշներուն կրակ վառելով՝ ինքզինք կ'այրէ, ինչպէս Սաուղին աչքերէն քունը փախած էր նախանձի պատճառով, թէ՝ Դաւիթին սպաննեմ: Դարձեալ՝ չար է նախանձը, քանի որ մահ բերաւ աշխարհ, որովհետև բանասարկուին նախանձին պատճառով է, որ մահը աշխարհ մտաւ: Դարձեալ՝ նախանձոտը դժոխքին մէջ իսկ վնաս գործելով չի՛ կշտանար, ինչպէս որ մեծահարուստը դժոխքին մէջ կամեցաւ Աբրահամի գոգէն Ղազարոսը իր մօտ քաշել, որ ո՛չ թէ ցանկաց ջուրին՝ զովանալու, որովհետև գիտէր ի վիճակի չէր, այլ կը կամենար աղքատին կրակի տանջանքներուն մէջ քաշել: Դարձեալ՝ ինչպէս ծառը իր պտուղէն կը ճանչցուի, այդպէս ալ չար նախանձը՝ հօրմէն եւ մօրմէն: Նախանձին հայրը սատանան է, իսկ մայրը՝ հպարտութիւնը. որովհետև սատանան նախանձին հայր եւ ծնող եղաւ, որ մարդուն նախանձեցաւ, թէ ինչպէ՞ս հողածինը դրախտին մէջ դրուեցաւ: Իսկ [նախանձին] մայրն ու սնուցիչը հպարտութիւնն է, քանի որ նախանձը հպարտութեան դուստրն է, որովհետև հպարտութիւնը այնպիսի գարշելի մայր մըն է, որ որո՛ւն որ մօտենայ, չար դուստրը կը ծնի:

Դարձեալ՝ բոլոր մեղքերը չար են եւ չարին համար են, սակայն նախանձը կը մաքառի բարիներուն դէմ, որովհետև ինչպէս ուրիշներու յաջողութենէն կը տրտմի, այդպէս ալ կ'ուրախանայ անոնց անյաջողութեան համար:

Արդարև, նախանձը տրտմութիւն է ուրիշներու բարիքին ի տես, որ բարին չար ըսել կու տայ, լոյսը՝ խաւար, քաղցրը՝ դառն, հրեշտակը՝ սատանայ: Նախանձոտ մարդը գիշերային թռչունի կը նմանի, որ խաւարը կը սիրէ ու լոյսը կ'ատէ: Դարձեալ՝ կը նմանի թիթեղի, որ է քէփէնէկը [հաստ, վրանանման թրքական աւանդական հովիւի վերնազգեստ է], որ մնայուն կերպով կը ջանայ ճրագին լոյսը մարել, սակայն իր թևերը կ'այրին ու բոցին մէջ իյնալով՝ կը սատկի: Դարձեալ՝ բուի կը նմանի, որ աւերակ տեղերը կը բնակի: Այսպէս նախանձոտը մնայուն կերպով ուրիշներուն անյաջողութեամբ կ'ուրախանայ:

Տակաւին, նման է շունի, որովհետև շունը, ինչքան ալ կուշտ ըլլայ, չ'ուզեր, որ աւելցած ոսկորը ուրիշ շուն մը ուտէ: Դարձեալ՝ նման է օձի, քանի որ օձը, ինչ ալ ուտէ, թոյն ու աղի կը վերածէ. այսպէս ալ նախանձոտը ամէն բարի բան չարին կողմ կը դարձնէ: Դարձեալ՝ նախանձը զանգակի կը նմանի, որ ուրիշները կ'արթնցնէ, իսկ ինքզինք կը մաշէ: Երանի՜ թէ նախանձոտը ամէն քաղաք եւ տեղ աչք ունենար, որ ամէնուն բարիքներով ինքզինք չարչարէր ու սատկեցնէր, քանի որ նախանձոտը սատանային մարտիրոսն է:

Դարձեալ՝ նախանձոտը Սուրբ Հոգիին հայհոյող է, որովհետև Սուրբ Հոգին բարութեան աղբիւր է, բոլորին բարիք կը կամենայ: Դարձեալ՝ նախանձոտը Աստուծոյ թշնամի է, որովհետև Աստուած կը կամենայ, որ չարն ալ բարի ըլլայ, իսկ նախանձոտը կը կամենայ բարին չար դարձնել: Ի վերջոյ, Յուդային նման է, որ համբուրելով զԱստուած կը մատնէ:

Ով որ կը նախանձի, նախ ինքզինք կը խանձէ:

ԽՆԴԻՐ Է

Մահացու երրորդ մեղքի մասին, որ բարկութիւնն է

Բարկութիւնը վրէժխնդրութեան բաղձանք ու փափաք է: Վրէժխնդրութիւնն ու դատաստանը միայն Աստուծոյ կը վայելէ (որ հոգիներուն եւ մարմիններուն Դատաւորն է), ինչպէս նաեւ երկրի վրայ եղող դատաւորներուն, որոնք Աստուծոյ ներկայացուցիչներն են: [Աստուած] բարիները պսակողն է եւ չարերը պատժողը: Արդ, բարկութիւնը հօրմէն եւ մօրմէն կը ծնի. հայրը հպարտութիւնն է, իսկ մայրը՝ նախանձը, իսկ ինքը կորուստի որդի է:

Նախ՝ որովհետև բարկութիւնը Աստուծոյ շինուածքը [կառուցուածքը] կ'աւրէ, ինչպէս Կայէնը Աբէլին ըրաւ:

բ. Բարկութիւնը փոշիի նման մարդուն կը թեթևցնէ. ասոր դէմ կ'ըսէ Յակոբ առաքեալը, որ իւրաքանչիւր մարդ թող աճապարէ լսելու, չշտապէ խօսելու եւ դանդաղի բարկանալու:

գ. Բարկութիւնը կը մերժէ լոյսը եւ բարկացողին խաւարի մէջ կը նստեցնէ, որովհետև արեգակը բարկութեան վրայ մայր չի՛ մտներ, այսինքն՝ Աստուծոյ շնորհքը բարկացողի հոգիին մէջ:

դ. Բարկութիւնը Աստուծոյ դատաստանը կը խափանէ, քանի որ Աստուած, երբ կը տեսնէ, թէ մէկը դատաստան մը, բարկանալով, իր ձեռքով կը կատարէ, այլևս Ինք դատաստան չըներ: Պօղոս առաքեալ կ'ըսէ. մարդուն բարկութիւնը Աստուծոյ դատաստանը կը խանգարէ:

ե. Բարկութիւնը աշխարհի ընդհանուր կարգն ու կանոնը կը քակտէ, որովհետև աշխարհի երանութիւնը խաղաղութիւնն է, իսկ բարկութիւնը աշխարհին խաղաղութիւնը վերցնելով՝ աշխարհի կարգն ու կանոնը թշուառական եւ խեղճ կը դարձնէ: Սիրաք Իմաստունը կ'ըսէ. շատեր սուրով ինկան, սակայն առաւել եւս բարկութեամբ, քանի որ աշխարհի վրայ կռիւ չկայ՝ առանց բարկութեան:

զ. Բարկութիւնը Աստուծոյ պատկերը կ'ապականէ, քանի որ ինչպէս պղտոր ջուրին մէջ մարդուն պատկերը չ'երևիր, այդպէս ալ բարկացողի հոգիին մէջ՝ Աստուծոյ պատկերը, որովհետև ամէն տեսակի գեղեցկութիւնները հեռո՛ւ են բարկացողէն: Տակաւին, բարկացողին մարմինը ինչքանով որ տգեղ է, հոգին՝ հազարապատիկ աւելի:

է. Բարկութիւնը մարդուն յիմար կը դարձնէ, քանի որ բարկացած ժամանակ յաճախ չենք գիտեր, թէ որո՛ւն կը բարկանանք, բայց կը բարկանանք: Սովորական մեղքեր եթէ ըլլան, կը ծածկուին, բայց բարկութիւնը մնայուն կերպով դուրս կը վազէ:

ը. Բարկացողը ալեկոծ ծով է, ծովու անսաստ ալիք, ինչպէս կ'ըսէ Թադէոս առաքեալ, քանի որ ինչպէս ծովու ալիքները նաւը կ'ընկղմեն, պարիսպներ կը փլցնեն, եւ իրենք ալ կը խորտակուին, այդպէս ալ բարկացողը, ուրիշները վնասելէ զատ, ինքզինքն ալ կը չարչարէ, որ պայթուցիկ ռումբի նման է եւ ինկած տեղը կը քանդէ, ու ի՞նք եւս կը փշրուի:

թ. Բարկութիւնը նոյնիսկ անզգայէն ալ վրէժխնդիր ըլլալ կ'ուզէ, քանի որ շատ յաճախ մարդ բարկութեան պատճառով գինին կը թափէ, շիշը գետնին կը զարնէ, թուղթը կը պատռէ, գրիչը կը կտրէ, դռան ճռճռոցէն նեղութիւն կը զգայ, վառած մոմը կը մարէ՝ եթէ կը չթչթայ. ալ աւելի նեղութիւն կը զգայ, վիրաւորուած տեղը քերելէն բացի՝ իր մարմինն ալ կը ցաւցնէ:

ժ. Բարկութիւնը մարդս Աստուծոյ նմանութենէն կը մերկացնէ, քանի որ Աստուծոյ գործերը դանդաղ ու հանդարտ են, իսկ բարկութիւնը իմաստութիւնը կը կորսնցնէ, աջն ու ձախը կողմնորոշել չի՛ ձգեր, միտքը կը կուրցնէ, որպէսզի ճշմարիտը չտեսնէ: Մարդուն կատաղի շուն կը դարձնէ, որ պարապ տեղ, պէտք ըլլայ թէ ոչ, հաջել կու տայ, ինչպէս փողոցի շունները, որ եթէ լսեն, թէ թաղի մը մէջ շուն մը կը հաջէ, իրենք ալ, առանց պատճառը գիտնալուն, կը հաջեն, եւ եթէ հարցնեն իրենց ինչո՞ւ կը հաջէք, կ'ըսեն, թէ՝ ի՞նչ գիտնանք, միւս թաղը կը հաջեն, մենք ալ կը հաջենք: Այսպէս՝ անցեալին Եփեսոս քաղաքին մէջ կռապաշտները Պօղոս առաքեալին վրայ հաւաքուեցան եւ չէին գիտեր, թէ ի՞նչ բանի համար հաւաքուած են, այլ՝ երկու ժամ անընդհատ կ'աղաղակէին, թէ՝ մեծ է եփեսացիներուն Արտեմիսը: Ահաւասիկ, բարկութիւնը ամենանի կատաղի շուն կ'ընէ մարդուն եւ պարապ տեղ հաջել կու տայ:

Բարկութիւնը այն ատեն է գովելի,
երբ բարկութեան կը բարկանանք:
Իսկ եթէ կ'ուզենք վրէժ առնել,
բարկութիւնը յոյժ խոտան է:

Շարունակելի

«Քրիստոնէական ուսանելի», 1806

Աշխարհաբարի վերածեց Վարանդ (Յակոբ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԸ

Սեբաստիայի քառասուն մանուկները

Մեծ պահքի հինգերորդ կիրակիին նախորդող օրը Հայոց Եկեղեցին նշում է Սեբաստիայի քառասուն մանուկների հիշատակության օրը: Իսկ ովքե՞ր էին նրանք՝ Դոմետիանոսը, Կյուրղոսը, Վաղեսը, Եվտիքեսը, Իսյուքիկոսը, Եվնոյիկոսը, Եղիանոսը, Փլավիոսը, Սմարագդոսը, Քսանթիոսը, Սիսինիոսը, Ղևոնդիոսը, Մելիտոն, Սևերիանոսը, Փիլիքտիմոնը, Անկեասը, Իրալոսը, Եքտիկոսը, Կյուրիոնը, Այետիոսը, Ալեքսանդրոսը, Ակակիոսը, Վալերիանոսը, Նիկոլայոսը, Եվտյուքիոսը, Հովհաննեսը, Բիբիանոսը, Քուդիանոսը, Լուսիմաքոսը, Գայիոսը, Ագղիոսը, Իլիոդեսը, Դոմնասը, Աթանասիոսը, Պրիսկոսը, Կանտիտոսը, Սակերդոնը, Գորգիանոսը, Թեոդուլոսը, Թեոփիլոսը (Համաբարբառ յասմաւուրք, հտ. Գ, Ս. Էջմիածին, 2010, էջ 104): Այս մանուկները Կապադովկիայի Լիկիանոս կայսեր գնդի զինվորականներն էին: Նրանք առանձնանում էին իրենց բարեպաշտ կյանքով և անսակարկ հավատքով առ Երկնավոր Թագավորը: Իմանալով նրանց քրիստոնյա լինելու մասին՝ պարտադրում են ուրանալ Քրիստոսին: Այնուհետև Լիկիանոս կայսեր հրամանով ստիպում են նրանց զոհ մատուցել կուռքերին, սակայն վերջիններս խիզախորեն խոստովանում են իրենց հավատն առ Աստված և հաստատուն մնում այդ հավատի մեջ: Այս ամենին հաջորդում է այն, որ Սեբաստիայի դատավորը՝ Ագրիկողայոսը, որոշում է նրանց պատժել, չարչարանքների միջոցով ստիպել դարձի գալ և պաշտել կուռքերին: Նրանց քարերով հարվածում և տանջում են, հետո մերկացնում ու գցում են լիճը: Ձմռան սաստիկ ցրտից և ջրի սառնությունից քառասուն մանուկների մարմիններն սկսում են ճաքճքել, և արյուն է հոսում: Ամբողջ գետը ծածկվում է նրանց արյունով. «....և ծածկէր զջուրն ի նմանութիւն վարդափթիթ ծաղկոյ»:

Այդպես նրանք մնում են մինչև առավոտ: Ջիվորներից մեկը, չդիմանալով ցրտին և փորձությանը, իրեն դուրս է նետում լճից և մահանում: Արշալույսին մյուս երեսունինը սրբերը երևում են լուսե պսակներով, իսկ նրանց հսկող զինվորականը, տեսնելով աստվածային հրաշքը, դարձի է գալիս, իրեն նետում լիճը և դառնում պսակակից մնացյալ սրբերին. «Եվ ես քրիստոնեայ եմ: Քրիստոս Աստուած, ի Քեզ հաւատամ, յոր սոքա հաւատով յուսացան և պսակեցան»: Այսպիսով՝ նրանք միաբերան գովաբանում են Աստծո փառքը և դիմանում բոլոր փորձություններին:

Հաջորդ օրը կայսեր հրամանով նրանց սպանում են, մարմինները դնում են սայլի վրա և տանում: Իսկ նրանցից մեկը՝ Մելիտոնը, ողջ է մնում, և նրան թողնում են: Սակայն նրա մայրը շատ էր ուզում, որ իր որդին ևս մյուսների նման հանուն հավատի նահատակվի: Նա վերցնում է իր որդուն, դնում ուսին և գնում սայլի հետևից: Երբ հասնում են տեղ, Մելիտոնը հոգին ավանդում է, և մայրը նրա մարմինը թողնում է մյուս սրբերի մարմինների մոտ: Հեթանոսներն այրում են սրբերի մարմինները, հավաքում մի տեղ և լցնում գետը, որպեսզի քրիստոնյաները չգտնեն նրանց:

Երեք օր անց Սեբաստիայի եպիսկոպոսին տեսիլք է երևում. սրբերը խնդրում են նրան՝ գետի մեջ գտնել իրենց մասունքները: Եպիսկոպոսը գիշերով գնում է գետի մոտ և տեսնում՝ «փայլէին նշխարք սրբոցն ի մէջ ջրոյն որպէս զաստեղս»: Այդպես նա գտնում է սրբերի մասունքները, հավաքում և թաղում մի վայրում, որտեղ հետագայում կառուցվում է Սեբաստիայի քառասունգմբեթանի Քառասուն մանկունք եկեղեցին:

Սուրբ քառասուն մանկանց հիշատակին նվիրված մի շարք եկեղեցիներ ու վանքեր են կառուցվել տարբեր ժամանակներում: Արևմտյան Հայաստանում՝ Սեբաստիայում, Կարինի, Խարբերդի, Դերսիմի գավառներում, եղել են վանքեր, որոնք ժամանակի ընթացքում ավերվել և ոչնչացվել են: Ներկայիս Թուրքիայի Հաթայի մարզի Ալեքսանդրեթ քաղաքում է գտնվում Սրբոց Քառասուն մանկանց եկեղեցին, որը կառուցվել է 1872 թ.: 2002 թվականից սկսած՝ այն որոշ ժամանակ չի գործել, այնուհետև վերաբացվել է և գործում է մինչ օրս Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի հովանու ներքո: Լոռու մարզի Դսեղ գյուղի հյուսիսարևմտյան մասում է գտնվում Քառասնից մանկանց վանական համալիրը, որը կառուցվել է 13-րդ դարում: Կառուցումն ավարտվել է 1241–1256 թթ.: Ցավոք, վանքը չի գործում և գտնվում է կիսավեր վիճակում: Նույն անունը կրող ևս մեկ եկեղեցի կա Օշական գյուղում, որը հայտնի է նաև Մանկանոց անունով: 1958 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի աջակցությամբ և արգենտինահայ բարերարների հովանավորությամբ Իտալիայի Միլան քաղաքում կառուցվում է Սուրբ Քառասուն մանկանց եկեղեցին:

Լիլիթ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 14.04.2025 թ.
Տպաքանակը՝ 1265